



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

895.1

9-59

NOV 2011

895.1
9-59



ԻՆՆԿՆ

8

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Թարգմանեց

Տիրուհի Կոստանեանց

Տ Փ Խ Ի Ս

Տպ. Մ. Շարաձեհի || Тип. М. Шарадзе.


1895

895.1
9-59

01 AUG 2013
17.07.2013

74.288

Дозволено цензурою, Тифлисъ, 8 Февраля,
1895 г.



13548-07

Յ Ա Ն Կ


1. Կուզիկ Լիէու.
2. Աշխատութեան հրեշտակը:
3. Երկու եղբայր:
4. Իմաստուն խորհրդատու.
5. Սիու-Լիէն, շինական իշխանի աղջիկը:

ԿՈՒՋԻԿ ԼԻԷՈՒ



Ու-Տշէու քաղաքի շըր-
ջակայքում, որը չի-
նական Վենետիկն
է համարվում, ապ-
րում էր մէկ աղ-
քատ կուզիկ ձըկ-
նորս, անունը Լի-
էու: Նորան միայն

«Կուզիկ» անունն էին տալիս: Լիէուն փոք-
րիկ, աշխույժ, աշխատասէր և ուրախ մարդ
էր: Նա երևելի ձկնորս էր և բացի այդ
լաւ երաժիշտ էր, այնպէս որ նորան
հեռու տեղերումն էլ լաւ ճանաչում էին:



Լիէուն մինչև անգամ լաւ կրթուած էր
 և այդ պատճառով շատերը դիմում էին
 նորան ու խորհուրդներ էին հարցնում:
 Եւ այդպէս ապրում էր խեղճ «Կուզիկը»
 գոհ իւր վիճակից և ոչինչ չէր ցանկա-
 նում, բացի ձկնորսութեամբ մի քիչ ա-
 ւելի փող վաստակելուց:

Այդ գիշեր ժամանակ էր: Լուսինն
 արդէն դուրս էր եկել և մեղմ կերպով
 լուսաւորել էր սիրուն քաղաքի փայլուն
 կտուրները: Շքեղ գօնդօլները սահում
 էին ջրանցքների վերայով զանազան ուղ-
 դութեամբ— շոգ օրից լետոյ ամեն մարդ
 ուզում էր զովանալ և հանգստանալ:
 Նաւերի վերայ, որտեղ որ ապրում էր
 աղքատ դասակարգը, մեծ բազմութիւն
 էր հաւաքուած. ամեն մէկն յարմար
 կերպով տեղաւորուել էր, որը պառկած,
 որը նստած և ծոյլ ու բաւական դէմ-
 քով ծխում էր ծխամորճը, հրապուրուե-
 լով Սու-Տշէու-ի իրիկուան գեղեցիկ տե-
 սարանով: Միայն Լիէուն չէր հանգըս-

տանում. նա պատրաստուեց ձուկ որսա-
 լու և ուրախ-ուրախ շրվշրվացնելով ըս-
 կըսեց սարքել իւր նաւակը:

— Երկինքը պարզ է և լուսինը հի-
 անալի փայլում է. գործս յաջող կ'եր-
 թայ—մտածում էր նա:

Եւ նորա երգն աւելի ուրախ էր
 հնչում: Զուկ որսալը, որի համար որ
 պատրաստուել էր Լիէուն, յաջող է լի-
 նում միայն պայծառ լուսնեակ գիշեր-
 ներին: Ահա թէ ինչպէս է լինում այդ.
 նաւակի երկարութեամբ կապում են մի
 սպիտակ և փայլուն տախտակ. որը ջրի
 երեսին են գցում և հանդարտ սպասում
 են, մինչև որ ձուկն ինքն իրան ընկ-
 նում է նաւակի մէջ, սպիտակ տախտա-
 կը ջրից չզանազանելով:

Փոքրիկ Լիէուն նաւակը շարժեց և
 արդէն ուզում էր առաջ գնալ, երբ յան-
 կարճ նորան հաւասարուեց մի փառա-
 ւոր գօնդօլ և այնտեղից ձայներ լսուե-
 ցին՝

— Այդ նա է, — այդ անկասկած նա է:

— Ա՛խ, դու անիծուած պատկեր.
Ինչպէս մենք մոռացանք հետներս վերց-
նել. հիմա ինչպէս ճանաչենք նորան.
պէտք է ուրեմն սպասել մինչև վաղը,
ասում էին նոքա:

Այդ ժամանակ նոքա մօտեցան Լի-
էու-ի ձկան փոքրիկ խանութին և նոցա-
նից ամենանշանաւորը բարձր կարգաց
խանութի ճակատի գիրը՝ «Լիէու. վա-
ճառում է ամեն տեսակ ձկնեղէն»: Գո-
րա տակը գրուած էր չինական մի խոր-
հրդաւոր խօսք՝ «Պու-գու» որ նշանա-
կում է՝ «նա ձեզ չի խաբի»:

Լիէուն մտածելով որ այդ մարդիկ
եկել են իրանից առուտուր անելու, ըս-
կսեց գովել իւր ապրանքը՝

Գնեցէք, գնեցէք, պատուաւոր հիւ-
րեր. ոչ մի տեղ այդպիսի լաւ և թարմ
ձուկ չէք գտնի: Լիէուն ամեն տեսակ
ձուկն ունի. նա ունի և վայրենի բու-
դեր, որոնք կերակրվում են դղումով և

հրաշալի ոսկի ձկնիկներ «Կին-իու» կո-
չուած, որոնցով զարդարում են թագա-
ւորական պալատը:

Բայց անծանօթը, որը կարգում էր
խանութի վերայ գրուածը, մի քանի
խօսք նշանակեց իւր ծոցատետրի մէջ և
նաւաստիներին հրամայեց շարունակել
ճանապարհը: Միայն հեռանալիս նա մի
քանի անգամ լետ դարձաւ և նայեց ազ-
նիւ ձկնորսի վերայ. Իսկ ձկնորսը նայեց
նոցա լետեից, ուսերը շարժեց և հան-
գըստացաւ, որովհետև նա ոչ մի բանից
և ոչ ոքից չէր վախենում: Նա մարդ-
կանց ոչ մի վատութիւն չէր արել և
նա թշնամիներ չուներ. իսկ այդ պա-
րոնները բոլորովին նման չէին գողերի:
Եւ այդպէս դատելով, նա առաւ թիերն
ու առաջ գնաց:

Առաւօտուայ ժամը տասն էր: Գի-
շերուայ ձկնորսութիւնից լետոյ, Լիէուն
վերադարձաւ տուն և պատրաստուեց մի
քիչ հանգստանալու: Նա ինչպէս միշտ,

ուրախ-ուրախ երգելով խոնաւ խոտի վե-
րայ գցեց իւր բռնած ձկները և հաշվում
էր, թէ ինչքան փող կ'աշխատի դոցա
համար:

Յանկարծ նա մի անգամից երգը
կտրեց և դէմքը մռայլուեց — քիչ հեռու
էլի առաջին օրուայ գօնդօլն երևաց:
Երկու անծանօթներն ուշադրութեամբ
սկսեցին նայել նորա վերայ, յետոյ կար-
դացին մի ինչ որ թուղթ և վերջապէս
նորից բացականչեցին՝

— Այո՛, այդ նա է — անկասկած նա է:

— Այո՛, այդ ես եմ, դժգոհ ձայնով
պատասխանեց Լիէուէն: Ի՞նչ էք կամե-
նում ինձանից: Բայց անծանօթները միայն
խոնարհ կերպով ողջունեցին նորան և
հեռացան:

Լիէուէի համբերութիւնը հատաւ.
նա սկսեց հայհոյել հեռացող գօն-
դօլի յետևից և յայտնեց հարևաններին,
որ կ'երթայ գանգատուելու իւր մանդա-

րինին *), եթէ որ նոքա իրան հանգիստ
չթողնեն:

Բայց այդ ժամանակ խորհրդաւոր
գօնդօլն երրորդ անգամ մօտեցաւ նորան.
Իսկ գօնդօլի յետևից երևցան էլի երկու
մեծ, փառաւոր նաւեր ազգային դրօշակ-
ներով: Եւ ինչպէս մեծ եղաւ Լիէուէի և
նորա հարևանների զարմանքը, երբ այդ
նաւերը նոյնպէս կանգնեցին ձկան խա-
նութի առաջ: Բայց աւելի շատ բոլորը
զարմացան և ապշեցին, երբ նաւերի մէջ
գտնուող նշանաւոր մանդարինները կու-
զիկ ձկնորս Լիէուէի առաջ չինական «Կօու-
տօու» **) կոչուած յարգանքը ցոյց տուին
և ապա նաւապետը նորան ողջունեց «շին-
շին» և խնդրեց «Կուզիկին» միասին գնալ:

*) Չինարէն կընշանակէ՝ իշխան:

**) Այդ երկրպագութիւն է, որ Չի-
նաստանում անում են միայն ամենանշանա-
ւոր մարդկանց համար՝ նոցա առաջ չոքում
և ճակատները գետնին են խփում:

Բայց ո՛ւր, հարցրեց Լիէուհն:

— Պալատ, թագաւորի մօտ:

Ձկնորսը զուր էր աշխատում հասկանալ, թէ ինչո՞ւ են իրան պալատ տանում. զուր էր նա նոցա համոզում, թէ գուցէ դա մի սխալմունք է, կամ թէ միորեւէ մէկը կամեցել է ծաղրել... բայց ոչոք չէր լսում նորան: Մանդարինները հրամայեցին աստիճանաւորներին նորան շքեղ և արքայական շորեր հագցնել. լետոյ պատշաճ յարգանքներով նստեցրին նորան կայսերական ամենամեծ նաւի մէջ և տարան, շրջապատողներին թողնելով ապշած ու քարացած:

— Մինչև որ Լիէուհն իւր լուռ ուղեկիցներով կ'երթայ կըհասնի պալատ, ես ձեզ կըբացատրեմ այդ տարօրինակ դէպքը:

Այն ժամանակ, երբ այդ պատահեց, տէրութիւնն ամենաանմխիթար վիճակի մէջ էր ընկած: Անարժան կառավարիչներն իրանց կըքերի լետեից ընկած, դա-

տարկել էին գանձարանը և անբարոյականացրել էին ժողովրդին: Պատմութիւնը վկայում է, որ այդպիսի վատ թագաւորներից մէկը փորել է տուել մի մեծ ու խորը լճակ, որը լցնել է տուել գինով և սպա հրամայել է, որ իրան հպատակներից երեք հազար հոգի ընկնեն այդ լճակի մէջ: Լճակի չորս կողմը քաշ էր տուած խորոված միս, որպէս զի անկուշտ լողուորների ագահութիւնն յագենայ: Իսկ լճակի առաջ պատրաստուած գահի վերայ նստած էր ինքը թագաւորը և անվերջ ծիծաղում էր այդ դժբախտների վերայ, որոնք այնքան հարբեցին, որ հէնց այդ դրութեան մէջ էլ խեղդուեցին:

Թագաւորների այդպիսի կոպիտ ու տգեղ վարմունքն օրինակ էր լինում նոցա հպատակներին: Մանդարինները կամենալով իրանց առաջնորդին դուր գալ, նորա հետ միասին սկսում էին զուարճանալ և անկարգութիւններ անել: Ժո-

ղովուրդը համբերում և լուում էր: Կերջապէս տանջուած ժողովրդի ուրախութիւնը շատ մեծ եղաւ, երբ գահի վերայ բարձրացաւ երիտասարդ և արժանաւոր արքայորդին: Նոր կառավարիչը բոլոր սրտով ցանկանում էր իրան նախորդների-երկրին հասցրած չարիքն ուղղել, բայց նա չունէր բարի և ազնիւ օգնականներ: Նա դառն կերպով ողբում էր ժողովրդի ցաւերի վերայ և անդադար մը տաճում էր, թէ ինչպէս նոցա օգնէ: Նա գիշերները չէր քնում և բոլոր ժամանակ նորա միտքը զբաղուած էր այդ հարցերով: Եւ ահա, նա մէկ գիշեր պարզ տեսաւ այն մարդու երեսը, որին որ նա պէտք է իրան առաջին նախարար նշանակէր: Առաւօտեան զարթնելով, թագաւորը կանչեց մի քանի նկարիչների և խօսքերով նկարագրելով երազում տեսած մարդու երեսի գծագրութիւնը, հրամայեց, որ նոքա նկարեն այդ մարդու մի քանի պատկերները: Այդ պատկերի նմա-

նութեամբ ամբողջ տէրութեան մէջ սկըսեցին փնտռել այն մարդուն, որը որ թագաւորից յետոյ պէտք է լինէր երկրի երկրորդ կառավարիչը: Եւ ահա ապագայ առաջին նախարարը պէտք է լինէր այն «Կուզիկ» ձկնորսը, որին որ վերջապէս գլտան թագաւորի մանդարինները:

Լիէուին տարան պալատ և մեծ հանդէսով ներկայացրին թագաւորին, որը սիրով ընդունեց նորան և ասաց՝

— Երկինքը ձեզ ընտրել է ինձ համար, որ լինիք իմ իմաստուն խորհրդատուն: Ազաչում եմ ձեզ, մի շողոքորթէք ինձ, մի ծածկէք ինձանից իմ պակասութիւններս. օգնեցէք ինձ լինել արժանաւոր թագաւոր և վերադարձրէք իմ ժողովրդի կորցրած պարկեշտութիւնն ու հեզութիւնը և վերականգնեցէք արդարադատութիւնը: Ես ձեզ առաջին նախարարի պաշտօնն եմ տալիս: Գնացէք, կարգի բերէք իմ տէրութիւնս:

Լիէուն ոչինչ չէր տեսնում, ոչինչ

չէր լսում. նա կարծես երազի մէջ էր: Լուռ կերպով ողջունեց նա թագաւորին և բարձրաստիճան պալատականների հետ միասին գնաց իրան համար յատուկ պատրաստուած շքեղ ապարանքները: Պալատականները խոնարհ ողջունեցին նորան և հեռացան: Նա մենակ մնաց և ամեն կերպ աշխատում էր ուշքի գալ. նա իւր գլուխը կոտրում էր և ուզում էր հասկանալ, թէ ինչ է պատահել իրան: Վերջապէս յոգնած ու թուլացած, Լիէուն ընկաւ իւր փափուկ անկողնու վերայ:

— Զարմանալի է, նիրհելով փնթփնթում էր նա՝ չէ որ այսօր ես չեմ խմել «սամշու»: (Բրնձից պատրաստած չինական գինի է:)

Խեղճ «Կուզիկը» քնեց... Նա զարթնեց նոյն շքեղ սենեակում, որի պատառները մետաքսէ կտորից էին և պատերը զարդարուած էին հին, թանգագին ու հազուագիւտ նկարներով: Նորա հագին էր դարձեալ նոյն փառաւոր ու հա-

րուստ զգեստը: Նա դուրս եկաւ սենեակից և խորը կերպով ողջունելով հանգիպեցին նորան դարձեալ նոյն բարձրաստիճան պաշտօնեաները:

— Մի՛թէ սա երազ չէ. մտածում էր Լիէուն:

— Կըբարեհաճի՞ք ներկայանալ թագաւորին, դիմեց նորան մեծ յարգանքով մանդարիններից մէկը. մենք սպասում ենք ձեր հրամաններին:

70-8458-17

Մի քանի ժամանակից յետոյ թագաւորի մօտ պետական խորհրդի նիստ էր լինելու. պէտք է խորհէին, թէ ինչպէս վերականգնեն երկրի խաղաղութիւնը և ժողովրդի վարքն ու բարքն ուղղեն: Լիէուն բնական խելք շատ ունէր և բաւական կրթուած էր. այդ պատճառով նա շատ զարմացաւ, երբ լսեց որ բոլորն աշխատում են թագաւորից ծածկել ժողովրդի ցաւերն ու հոգսերը և եր-



կրի վատ ուղղութեան պատասխանատուութիւնը մէկը միւսի վերայ էր գցում: Լիէուն ինքը հասարակ դասակարգից լինելով և մինչև այդ ժամանակն ապրելով իւր քրտնքի աշխատանքով, պարզ տեսաւ, որ բոլոր միւս նախարարները խաբում, կեղծում են: Նա սառնասիրտ չըկարողացաւ լսել այդ ամենը և երբ թագաւորը դիմեց նորան, որ նա յայտնէ իւր կարծիքը, այն ժամանակ Լիէուն ամեն ճշմարտութիւն ասաց նորան: Նա վառ գոյներով նկարագրեց տէրութեան բոլոր թշուառութիւնները. պատմեց թէ ինչպէս ամեն կողմից հարստահարում և ծանր հարկերի տակ են գցում ժողովրդին, որի միակ յոյսն երիտասարդ թագաւորի վերայ է: Լիէուն մանաւանդ շատ էր յարձակւում տէրունական բարձրաստիճան մարդկանց վերայ, որոնք զանազան բարձր պաշտօններ միայն նորահամար էին յանձն առնում, որ ապրեն

փառքի, բաւականութեան և շքեղութեան մէջ:

— Երկրի խաղաղութիւնն ու յաջողութիւնը, ասում էր Լիէուն, կախուած են նախարարներից: Հարկաւոր չէ մեծ ու բարձր պաշտօններ տալ այնպիսի մարդկանց, որոնք սովոր են ապրել միայն իրանց բաւականութեան համար. այդպիսի ծանր պարտականութիւններ պէտք է դնել նոցա վերայ, որոնք վարժ են աշխատելու և որոնք հոգս են տանում իրանց եղբայրների մասին: Մեծ պատիւներ պէտք է ստանան ազնիւ ու խոհեմ մարդիկ, այլ ոչ թէ կեղծաւորներն ու շողոքորդները:

— Ահա, թէ ինչու ես ձեզ ինձ մօտ կանչեցի և հասարակ աշխատաւորին... նշանակեցի իմ գլխաւոր նախարարը. և ես չեմ սխալուած իմ ընտրութեանս մէջ, ասաց թագաւորը:

Եւ այդ ժամանակ թագաւորը տարաւ Լիէունին մի կողմ և պատմեց նորան

իւր երազը... Լիէուն նոր հասկացաւ,
թէ ինչու իրան բերել են պալատ: Նա
չէր համաձայնում, ասելով որ ինքն այն-
քան կրթութիւն և գիտութիւն չունի և
թէ չի կարողանայ երկիրը կառավարել:
Բայց Լիէուի համեստութիւնն աւելի
դուր եկաւ երիտասարդ թագաւորին և
նա խնդրեց նորան մնալ իրան մօտ և
օգնել խելօք խորհուրդներով:

Այդ տէրութեան մէջ շուտով ամեն
բան դէպի լաւը փոխուեց: Լիէուն գի-
շեր-ցերէկ աշխատում էր: Նա անդադար
հետևում էր մանդարիններին, քննում
էր նոցա գործերը և թագաւորին ներ-
կայացնում էր ամեն հաշիւ: Խիստ կեր-
պով պատժում և հեռացնում էր մատ-
նիչներին և յափշտակողներին. իսկ նոցա
փոխարէն բարձր պաշտօններ էր յանձ-
նում այն խելօք, հանճարեղ մարդկանց,
որոնք մինչև այդ ժամանակ լետ էին
քաշուած և նոցա արժանաւորութիւն-
ները չէր նկատուած: Այդպէսով երկրի

վարչութիւնը հետզհետէ կանոնաւորվում
էր:

Շուտով Լիէուն իւր խստութեան
և ճշմարտասիրութեան համար շատ թըշ-
նամիներ ունեցաւ: Ուժեղ կուսակցու-
թիւնը միացաւ «անիծուած Կուզիկի»
դէմ, որն իշխաններին խանգարում էր
գռելու և գռփելու ժողովրդին: Բայց նոր
նախարարն ուշադրութիւն չէր դարձ-
նում մանդարինների ծաղրերի և տըր-
տուենջների վերայ. նա միսիթարվում էր
միայն նորանով, որ ժողովուրդն իրան
սիրում, յարգում և օրհնում էր:

Մէկ գիշեր Լիէուն ծպտեալ, շորերը
փոխած, գնաց դէպի քաղաքային դռները
և տեսաւ որ պահապաններն ամենքի
համար դուռը բաց են անում, այն ինչ
օրէնքով՝ ոչ մի մարդու չպէտք է ներս
թողնէին: Այդ օրէնքը չկատարելը մա-
նաւանդ շատ վտանգաւոր էր, որովհետև
այդ միջոցին ամեն ըոպէ սպասվում էր,
որ «կարմրայօնք» աւազակները քաղաք

կրմտնեն, քանի որ շրջակայ գիւղերը
 թալանուծ և բնակիչներին սարսափի մէջ
 էին գցում: «Կարմրայօնք» նոքա նորա
 համար էին կոչվում, որ ծաղրի համար
 իրանց յօնքերը կարմիր գոյնով ներկում
 էին: Լիէուն այդ տեսնելով, նոր հրա-
 ման արձակեց, որ քաղաքի դռները որո-
 շեալ ժամից յետոյ չբացուին ո՛չ մէկ
 մարդու համար. հակառակ դէպքում
 խիստ պատժի կ'ենթարկուի այդ օրէնքը
 խախտողը: Մի քանի օրից յետոյ թագա-
 ւորը գիշերով որսից վերադառնալիս քա-
 ղաքային դռները փակ գտաւ: Նոյն իսկ
 այդ ժամին, առաջին նախարարը՝ Լիէուն
 շրջում էր քաղաքի շուրջը, երբ յանկարծ
 նկատեց որ թագաւորի հետևորդները
 դուռը ծեծում են: Նա ինքը մօտեցաւ
 դրանը և հարցրեց թէ՛ ո՞վ է այդպէս
 ուշ ժամանակ դուռը թակում:

— Թագաւորը, պատասխանեց զի-
 նուորը կոպտութեամբ, չճանաչելով նա-
 խարարին:

Թագաւորը նոյնպէս իւրերկրի օրէնք-
 ներին հրպատակում է, ինչպէս և նորա
 ժողովուրդը: Օրէնքով, դռները գիշե-
 րուան այսպիսի ուշ ժամին ոչ ոքի, նը-
 մանապէս և թագաւորի համար չպէտքէ
 բացուին. պատասխանեց Լիէուն:

Բոլոր հետևորդներն ապշած էին
 այդ տեսակ չտեսնուած ու չլսուած
 յանդգնութեան համար: Իսկ թագաւորի
 համբերութիւնը հատնելով, ինքն առաջ
 եկաւ: Նորան յայտնեցին նախարարի պա-
 տասխանը և որչափ որ կարողացան չա-
 փազանցրին նորա յանդգնութիւնը: Թա-
 գաւորը գունատուեց բարկութիւնից և
 զայրացած հրամայեց, որ նորից ծեծեն
 դուռը: Բայց պահապանը պատասխանեց
 թէ՛ չընայելով որ շատ է յարգում երկրի
 տիրոջը, բայց այնուամենայնիւ չի կարող
 օրէնքի հակառակն անել:

— Փորձենք միւս դռները ծեծել,
 դառն կերպով ասաց թագաւորը և եթէ
 որ միւս պահապաններն էլ առաջին նա-

խարարի հրատարակած օրէնքները պահում են խիստ կերպով, այն ժամանակ ինձ մնում է գնալ իմ ամարային պալատս, կամ թէ գիշերել աստղալից երկընքի տակ:

Միևնոյն ժամանակ Լիէուն շարունակում էր պտտուել քաղաքի չորս բոլորը և հրամայում էր բոլոր պահապաններին-ոչ ոքի ներս չթողնել, մինչև անգամ թագաւորին:

Իայց երբ թագաւորի մարդիկ մօտեցան միևս դրանը և պահապանը ջահերի լոյսից տեսաւ արքայական նարնջեգոյն ամպհովանին-ոսկի վիշապով, նա էլ չհամարձակուեց հակառակել և դուռը բացեց: Ասում էին մինչև անգամ, որ պահապանն այդ արել է գլխաւոր նախարարի թշնամիներին դուր գալու համար: Լիէունի թշնամիներն յոյս ունէին, որ նա կ'արձակուի պաշտօնից:

Լիէուն շատ թշնամիներ ունէր և

Չինաստանում—Եւրոպայից ոչ պակաս գտնւում են շատ չար մարդիկ: Եւ միևնոյն ժամանակ Լիէուն շատ անարժան մանդարինների հեռացրել էր իրանց բարձր պաշտօններից, այնպէս որ նոքա 'ի ներքուստ ուրախանում և ցնծում էին այդ դէպքի համար:

Երբ թագաւորը վերադարձաւ պալատ, այն ժամանակ բոլոր շրջապատողները նկատեցին, որ նա դժգոհ է: Անկասկած, մտածում էին նոքա՝ նա հէնց վաղը կ'արձակէ առաջին նախարարին: Երբ «Կուզիկը» ներս մտաւ դահլիճ, բոլորը շրջապատեցին թագաւորին և անհամբեր սպասում էին, թէ արդեօք թնջ կըլինի: Լիէուն ինչպէս և միշտ հանգիստ էր երևում և մինչև անգամ չէր նկատում իւր բարեկամների վրդովմունքը և թշնամիների չար ուրախութիւնը: Թագաւորը մի քիչ յօնքերը կիտեց տեսնելով Կուզիկ նախարարին և նորա խորին «կօու-տօուին» նա հազիւ նկա-

տելի կերպով ձեռքով պատասխանեց։
Սյդ ամբողջ առաւօտուան ընթացքում
երևում էր, որ թագաւորը մտքի մէջ էր
ընկած և կարծես մի ինչ որ բանով յու-
զուած էր։ Գուցէ նա մտածում էր, թէ
ինչպէս պատժէ Լիէուին յանդգնութեան
համար և չէր վճռւում տէրութիւնը զըր-
կել այդպիսի մի օգտակար մարդուց. կա-
րելի է նա մաքառում էր ինքն իրան
հետ։ Ամբողջ պալատն անհամբեր սպա-
սում էր նորա վճռին։ Նիստը վերջացաւ,
բայց թագաւորը դեռ ոչ մի խօսք չէր ա-
սել իւր առաջին նախարարին։ Վերջապէս
Լիէուն մօտեցաւ գահին և ինքն առա-
ջինը խօսեց.

— Անցած գիշեր, ասաց նա, պահա-
պաններից մէկը թագաւորի հաստատած
պետական խիստ օրէնքին հակառակ, ար-
գելուած ժամին բացել է քաղաքային
դռները, փոխանակ հետևելու առաջին
պահապանի խոհեմ օրինակին։ Նոցանից

մէկին հարկաւոր է պատժել, իսկ միւսին
վարձատրել։ Ահա ձեր հաւատարիմ ծա-
ռայի կարծիքը։ Ոչոք չպէտք է իրեն օ-
րէնքից բարձր ճանաչէ. թշուառ է այն
երկիրը, որտեղ բարձրաստիճան պաշտօ-
նեաներն օրէնքը ծառայեցնում են իրանց
հաճոյքին...

Բոլորը զարմացած և լուռ սպասում
էին, թէ ինչ կ'ասէ թագաւորը։ Բայց
թագաւորը չէր խօսում և մտախոհ դէմ-
քով նայում էր իրան առաջը չոքած «Կու-
զիկ» սիրելու վերայ։ Յետոյ նա տեղից
բարձրացաւ և քիչ յուզուած ձայնով խօ-
սեց՝

— Իմաստուն Լիէուն ճշմարիտ է։
Օրէնքը պէտք է ամեն բանից բարձր լի-
նի։ Եւ ո՞վ արդեօք պարտաւոր է ուրիշ-
ներին օրինակ ցոյց տալ օրէնքները կա-
տարելու մէջ, եթէ ոչ ինքը, ժողովրդի
տէրը։ Ուրեմն, իսկոյն և եթէ հրաման
տուէք արձակել այն պահապանին, որը
գիշերն ուշ ժամին քաղաքային դռները

բացեց ինձ համար, իսկ միւսին, որն ազնիւ կերպով կատարեց իւր պարտականութիւնը, մենք չենք մոռանայ, կը վարձատրենք:

Հէնց որ թագաւորը վերջացրեց իւր խօսքը, բոլորը շրջապատեցին «Կուզիկ» իմաստունին և սկսեցին շնորհաւորել և գովաբանել նորա ամեն մէկ գործողութիւնը: Մանաւանդ սրտանց և ջերմ կերպով արտայայտում էին Լիէուին իրանց համակրանքն ու յարգանքը նորա թըշնամիները, որոնք դորանից միայն մի քանի ըօպէ առաջ բացարձակ ցնձում էին նորա կորստեան համար: Ափսոս որ կեանքի մէջ միշտ այդպէս է լինում... Եւ նախարար Լիէուն շատ լաւ գիտենալով այդ ջերմ արտայայտութիւնների իսկական արժէքը, հանգիստ սրտով, առանց յուզուելու լսում էր այդ ամենը: Բայց դորա փոխարէն մեծ ուրախութեամբ լըսեց թագաւորի պատասխանը: Հիմայ նա կարող էր միանգամայն հանգիստ լինել,

որ իւր թշնամիների չարախօսութիւնները չեն կարող թագաւորին գրգռել իրան դէմ: Եւ յիշաւի, այդ օրուանից էլ երբէք, ոչ մի անհամաձայնութիւն չէր ծագում նոցա մէջ: Եւ այդպէս, երիտասարդ թագաւորն իմաստուն նախարարի օգնութեամբ դառաւ ժողովրդի սիրելին, որը նորան անուանում էր «Հայր»:


Երբ թագաւորը վախճանուեց, Լիէուի թշնամիները նորից իրար անցան: Նոցա բողոքներն ազդեցին նոր կառավարչի վերայ, այնպէս որ նա արձակեց պաշտօնից առաջին նախարարին: Բայց Լիէուն չէր ցաւում այդ բանի համար: Նա տեսաւ որ պալատում այլ ևս չի կարող օգտակար լինել և հանգիստ ու մաքուր խղճով վերադառնալով իւր փոքրիկ խանութը, նա նորից սկսեց պարապել իւր հին արհեստով, ձկնորսութեամբ:

Լիէուն իւր կեանքը վերջացրեց համարեա բոլորից մոռացուած: Միայն ժողովուրդը չէր մոռանում նորան և ամեն

փորձանք ու ցաւ պատահած ժամանակ
յիշում էր իւր ազնիւ, հաւատարիմ նա-
խարարին, պաշտպանին, ասելով մեր սի-
րելի «Կուզիկի» ժամանակ այսպէս չէր:



ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ.



ըբեմն ապրում էր
Հնգկաստանում
մէկ թագաւոր:
Նա արդէն եր-
կար տարիներ ի-
մաստու թեամբ
կառավարում էր
այդ հարուստ եր-
կիրը, չխնայելով նորա համար ոչ մի
բան: Նա ունէր մի երիտասարդ, գեղե-
ցիկ և խելօք տղայ, Դելլա անունով:
Թէև Դելլան հօրից յետոյ ինքը պէտք է

Թագաւոր լինէր, բայց նա իւր ժամանակըն անօգուտ և զուր կորցնում էր միայն ուրախութիւն և քէֆ անելով: Շատ յաճախ հայրը նորան խրատում և համոզում էր այդպէս անհոգ չապրել, բայց զո՛ւր՝ նա ոչինչ չէր լսում: Դեւան չէր սիրում աշխատել, այլ յոյսը դրել էր իւր ընդունակութիւնների վերայ: Նա շատ անգամ ասում էր՝ «Ի՞նչ միտք ունի գըրքեր կարդալը. կըգայ ժամանակը և ես ամեն բան կըսովորեմ. իսկ մինչ այդ աւելի լաւ չէ, որ ես զուարճանամ և կեանք վայելեմ»: Այդպէս պնդում էին և նորա ընկերներն ու բոլոր շրջապատողները. ամենքն ուրախ էին երիտասարդ արքայորդու հաճութիւնները քաջալերելու և շարունակ աշխատում էին կատարել նորա ամեն մէկ ջնջին ցանկութիւնը: Բոլորովին զուր էին անցնում ծերունի հօր և ուրիշ իմաստունների խրատները:

Մէկ անգամ Դեւան որսի էր գնա-

ցել, երբ նորան հաղորդեցին հօր մահը: Այդ անսպասելի լուրը ժառանգին շատ մեծ ցաւ պատճառեց և երկար ժամանակ ու դառն կերպով ողբում էր նա իւր հօր կորուստը: Թէև Դեւան լաւ բընաւորութիւն ունէր և շատ էլ սիրում էր իւր ծերունի հօրը, բայց ծուլութիւնը և զուարճասիրութիւնը մեռցրել էին նորա մէջ ամեն լաւ բան: Գահ բարձրանալով նա ինքը շատ շուտով զգաց, որ ոչինչ չգիտէ և ոչ մի գործ չի կարող անել: Եւ այդ ժամանակ միայն նա անկեղծ ափսոսում էր, որ չէ լսել հօր խրատները: Հարկաւոր էր մեծ համբերութիւն, շատ գիտութիւններ ունենալ և աշխատելու սովորած լինել, որ կարելի լինէր այդպիսի մի մեծ երկիր կառավարել: Իսկ Դեւան միայն բարի ցանկութիւններ ունէր, այն էլ շուտով մոռացութեան էր տալիս, մանաւանդ, երբ այդ բարի ցանկութիւններն իրագործելու համար պէտք էր լինում չարչարուել և

զրկուել զանագան ուրախութիւններից: Նոր թագաւորը բոլորովին ծանօթ չէր իւր երկրին: Նա ծանօթ չէր ո՛չ երկրի օրէնքներին, ո՛չ նորա պահանջներին, ո՛չ էլ կառավարելու ձևին: Նա մինչև անգամ չէր ճանաչում իւր շրջապատողներին և չէր կարող ընտրել իրան համար ղեկավարներ և խորհրդատուներ: Իւր հին սովորութեամբ նա շատ շուտով սկսեց նորից ընկնել գուարճութիւնների յետևից և բոլորովին մոռացաւ իւր պարտականութիւնները: Բոլոր նորա մօտիկներն էլ սկսեցին հետևել նորան և ոչ ոք չէր ուզում աշխատել ու գործ առաջ տանել: Շուտով Դելլայի երկիրը սարսափելի վիճակի մէջ ընկաւ. երբէք նա այդպիսի աղքատութիւն չէր տեսել: Ծառայողները ժողովրդին ծանր հարկերի տակ էին գցում և անխիղճ կերպով ճրջում, հարստահարում էին նորան և ամեն մէկը նոցանից աշխատում էր խեղճ ժողովրդից մի բան պոկել, ինչ որ կա-

րող էր: Ժողովուրդը շատ անգամ փորձում էր գնալ թագաւորի մօտ և գանգատուել նորան, բայց պալատականները չէին թույլ տալիս: Դելլան բոլորովին չըգիտէր, թէ ինչ զարհուրելի անկարգութիւն էր տիրում իւր երկրում: Նա թէև նկատում էր երբեմն ժողովրդի աղքատութիւնն ու թշուառութիւնը, խղճում էր նորան, բայց չգիտէր թէ ցաւի տալը ինչպէս առնի: Ժողովուրդն երկար համբերեց, բայց վերջապէս նա էլ չդիմացաւ... Եւ ասանք երկրում մեծ խռովութիւն սկսուեց: Երիտասարդ թագաւորը անտանելի վիճակի մէջ էր և այդ վտանգի ժամանակ նա բոլորովին մենակ էր. չունէր ոչ մի օգնող և չգիտէր թէ ինչպէս վարուէր: Կատաղած ամբոխը ծեծեց ու ցրուեց թագաւորի բոլոր մարդկանց և արդէն սկսեց հետևել Դելլային, այնպէս որ Դելլան մի հասարակ գիւղացու շորեր հագնելով հագիւ հագ կարողացաւ փախչել իւր երկրից:

Դեւլլայի տնհետանալուց յետոյ, գա-
հը ժառանգեց նորա հօրեղբօր որդին,
այնպէս որ խռովութիւնն անցաւ: Բայց
Դեւլլան չէր համարձակուում մինչև ան-
գամ մտածել վերադառնալու իւր հայ-
րենիքը:

Ի՞նչ պէտք է անէր խեղճ փախըս-
տականը. նա բոլորովին մենակ էր օտար
երկրում. սովոր չէր աշխատելու և չէր
կարող իրան համար մի ճանապարհ բա-
նալ: Իժբաղտ արքայորդին տխուր ու
ծանր մտածմունքների մէջ ընկած, մէկ
անգամ նստած էր ճանապարհի վերայ.
յանկարծ, նորանից ոչ հեռու զանգակի
ձայն լսուեց... Նա յետ նայեց և քիչ
հեռու տեսաւ մի տաճար. Դեւլլան տեղից
վեր կացաւ և գնաց դէպի տաճարը. նա
ուզեց երկրպագել մեծ Փօ-ին *): Դեւլլան
ջերմ արտասուքներ էր թափում իւր ա-

*) Զինական և ճապոնական կրօնի հիմ-
նադիրն է. Փօ-նոյն է Բուդդա:

րած սխալների համար և մանաւանդ մե-
ղադրում էր իրան ծուլութեան և անհո-
գութեան համար: Նա խնդրում, աղաչում
էր Փօ-ին, որ նաներէ իրան և օգնէ այս դառն
փորձութեան ժամանակ: Աղօթքից յետոյ
Դեւլլան իրան աւելի ուժեղ և աւելի հան-
գիստ էր զգում: Նա այդ րոպէից հաս-
տատ վճռեց նոր կեանք սկսել. նա մտա-
ծեց գործով պարապել, որ ինքնուրոյն
կերպով, քրտնքի աշխատանքով, կարո-
ղանայ իրան համար նոր ճանապարհ
հարթել:

Դեւլլան անտառից անցնելով պա-
տահեց մի փայտահատի և հարցրեց նո-
րան թէ արդեօք օգնական հարկաւոր
չէ և առաջարկեց իւր ծառայութիւնը:
Փայտահատը պատմեց Դեւլլային, թէ որ-
չափ դժուար և ծանր է ամբողջ օրը
փայտ կտրելը, թէ ինչպէս մարդ թու-
լանում է այդ աշխատանքից և թէ որ-
չափ ջնջին վարձատրութիւն է ստանում
դորա համար: Բայց Դեւլլան ոչ մի բա-

նից չէր վախենում այլ ևս և նա ասաց
 համեստութեամբ՝ «Ես ոչինչ չգիտեմ ա-
 նել. երբէք չեմ աշխատել, բայց թէ ես
 առողջ և ուժեղ տղամարդ եմ և ուզում
 եմ փորձել քեզ հետ միասին աշխատե-
 լու»։ Փայտահատը տուեց նորան մի մեծ
 կացին և նոքա գնացին փայտ կտրելու։
 Դելլան թէև շատ էր աշխատում գործ
 առաջ տանել, բայց չէր յաջողում նո-
 րան—կամ կացինն էր դէմ առնում, կամ
 փայտի կտորը չէր կտրվում, կամ իրան
 ձեռքերն էր քերծվում։ Փայտահատը չար
 ծիծաղով ծիծաղում և կոպիտ խօսքերով
 նախատում էր նորան։ Օրուայ մէջ խեղճ
 Դելլան այնքան էր յոգնում այդ անսո-
 վոր աշխատանքից, որ շուտշուտ, բոլո-
 րովին թուլացած և քրտնքով ծածկուած,
 ընկնում էր գետնի վերայ։ Քանի-քանի
 անգամ նա ուզեց թողնել, փախչել այդ
 գործից, բայց նորա ինքնասիրութիւնը
 և մի կտոր հաց ազնիւ կերպով վստա-
 կելու անկեղծ ցանկութիւնը, նորան թույլ

չէին տալիս այդ անել։ Եւ նա նոր ոյ-
 ժով ու եռանդով կացինը ձեռքն էր առ-
 նում և սկսում էր աշխատել։ Երեկոյեան,
 այդ օրուայ գործը վերջացնելուց յետոյ,
 նոքա միասին կերան խորոված գետնա-
 խնձոր, խմեցին հասարակ ջուր և պառ-
 կեցին խուղի մէջ։ Հետևեալ օրը, դեռ
 լոյսը նոր էր բացուել, երբ նոքա էլի
 սկսեցին իրանց գործը։
 Եւ այդպէս օրերն անցնում էին աշ-
 խատանքի ու զրկանքների մէջ։ Դելլան
 ամեն բան տանում էր համբերութեամբ։
 Այդպէս անցաւ մի քանի ամիս։ Փայտա-
 հատը տեսնելով, որ Դելլան սրտանց և
 ջանասիրութեամբ աշխատում է, խնդրեց
 իւր հօրեղբօր որդուն, որը մակոյկ բա-
 նեցնող էր, որ նա Դելլային իրան մօտ
 վերցնէ։ Այդտեղ Դելլայի գործն աւելի
 հեշտ և զանազանակերպ էր. հարկաւոր
 էր լինում մտաւոր աշխատանք և մի
 քանի գիտութիւններ ձեռք բերել։ Դել-
 լան հանգստութեան ժամերին սկսեց

կարգալ և սովորել: Մէկ անգամ, ճապո-
նացի մի քուրմ, տեսնելով Դելլային գիրք
կարգալիս, սկսեց նորան հարց ու փորձ
անել և զարմացաւ նորա այդքան եռանդ
և գիտութիւն ունենալու վերայ: Քուրմը
կամեցաւ Դելլային մարդու մէջ մտցնել
և մէկ հարուստ վաճառականի մօտ տե-
ղաւորեց: Այդտեղ Դելլան ոչ միայն շատ
ազատ ժամանակ ունէր կարգալու և պա-
րապելու, այլ և իւր գիտութիւնը կարող
էր գործով ցոյց տալ: Իւր նոր պարապ-
մունքները նա այնպէս ճշտութեամբ և
բարեխղճութեամբ էր կատարում, որ վա-
ճառականն իւր աղջկան տուեց նորան
կնութեան և իւր բոլոր գործերն յանձ-
նեց նորան: Դելլան ամենքից ծածկում
էր իւր ծագումը և այդ պատճառով ոչ
ոք չգիտէր, թէ նա մի արքայորդի է:
Թէև Դելլան զգում էր, որ ինքը հիմայ
շատ աւելի երջանիկ է, քան այն ժամա-
նակ երբ թագաւոր էր, բայց թէ երբեմն
ակամայից նորա սրտումը հպարտութիւն էր

երևում: Աշխատելով անդադար և օրէ-
ցօր լայնացնելով իւր գիտութեան և փոր-
ձառութեան ծաւալը, Դելլան զգում էր,
որ այժմ նա կարող է իւր երկիրը կա-
ռավարել նախորդներից ոչ պակաս: Ամ-
բողջ քաղաքը Դելլային յարգում և գնա-
հատում էր նորա գործերի և ազնու-
թեան համար. բացի այդ Դելլան հա-
րուստ էր և ոչ ոքից կախում չունէր:
Վերջապէս նորան միաձայն ընտրեցին այդ
քաղաքի կառավարիչ, որտեղ որ նա մը-
տել էր ինչպէս մի հասարակ բանուոր:

Ամեն օր Դելլան ինքը քննում էր
մեղաւորներին, հոգս էր տանում քաղա-
քացիների բարեկեցութեան համար, իսկ
գիշերները կարդում էր և անդադար
ուսումնասիրում էր օրէնքները:

Միևնոյն ժամանակ Դելլայի հայ-
րենակիցները սկսեցին ափսոսալ, որ ար-
տաքսեցին երիտասարդ արքայորդուն:
Նոր թագաւորի օրով նոցա դրութիւնն
աւելի վատացաւ: Դելլայի հօրեղբօր որ-

դին մինչև գահը բարձրանալը կեղծում,
 շողոքորդում և իրան բարի էր ձևացնում,
 բայց հէնց որ թագաւոր եղաւ, ցոյց
 տուեց իւր խստասրտութիւնն ու փառա-
 սիրութիւնը: Նա բոլորովին չէր ցաւում
 իւր ժողովրդի վերայ և նորա հետ վար-
 վում էր շատ խիստ ու կոպիտ: Ժողո-
 վուրդը սկսեց լիշել երիտասարդ թագա-
 ւորին ասելով՝ «Արքայորդին դեռ այնքան
 երիտասարդ էր, ով գիտէ-գուցէ ուղղէր.
 նա բարի սիրտ ունէր. միայն թէ նորա
 պալատականները վատ էին և ոչ ոքի
 չէին թողնում նորա մօտ: Եւ հիմայ նոյն
 իսկ այն պալատականները մեզ տանջում,
 չարչարում են բռնակալ թագաւորի հետ
 միասին:» Վերջապէս Դելլայի ականջին
 լուրեր հասան, որ իւր առաջուայ հպա-
 տակները դժգոհ են թագաւորից: Նա
 սկսեց աղօթել մեծ Փօ-ին և խնդրել, որ
 նա թոյլ տայ իրան նորից գահը ժառան-
 գելու, գոնէ երկու, երեք տարով, որպէս
 զի ուղղէ այն չարիքը, որ նա հասցրել

է իւր ժողովրդին: Նա բաւական արդէն
 պատժուեց իւր առաջուան անհոգութեան
 համար. նա ամեն նեղութիւն անտր-
 տունջ տարաւ և հիմայ հպարտութեամբ
 կարող էր վերադառնալ իւր հայրենիքը:
 Բայց չնայելով նորից թագաւորելու
 մեծ ցանկութեանը, Դելլան տատանվում
 էր՝ ո՞ւր են նորա հպատակները, ո՞վ երաշ-
 խաւոր կըլինի նորա յաջողութեան հա-
 մար և ի՞նչպէս նա կըվճռի ներքին
 պատերազմ յարուցանել իւր սիրելի հայ-
 րենի երկրում: Եւ նա մտածեց սպասել...
 Վերջապէս ինքը-ժողովուրդը պատերազմ
 սկսեց իւր բռնակալ թագաւորի դէմ. եր-
 կրի բոլոր ծայրերում խռովութիւնը սաստ-
 կացաւ: Մէկ հասարակ գիւղացի ժո-
 ղովրդի գլուխն անցած այնպէս համոզիչ
 կերպով հասկացնում և պնդում էր, թէ
 պէտք է Դելլային խնդրել նորից գահ
 բարձրանալ, որ ժողովուրդը պատգամա-
 ւորներ ուղարկեց աքսորուած արքայոր-
 դու մօտ: Միևնոյն ժամանակ բռնակալ

Թագաւորը չէր զիջանում. նա իրան մօտ
 հաւաքեց այնպիսի վատ, գող, աւազակ
 մարդկանց, որոնք պատրաստ էին երկիրը
 կողոպտել, քար ու քանդ անել: Սկսուեց
 ծանր մաքաւումն:

Դեւլան սիրով ընդունեց պատգամա-
 ւորներին, մեծ ուրախութեամբ համա-
 ձայնեց վերադառնալ իւր հայրենիքը և
 որտեղից որ նա փախել էր իբրև մի ան-
 պատիւ աքսորական, այժմ նորան ընդու-
 նեցին փառքով ու պատուով: Նորա կու-
 սակիցների թիւն օր ըստ օրէ աւելանում
 էր: Վերջապէս Դեւլան իրան թագաւոր
 հրատարակեց և իւր հօրեղբօր որդու
 դէմ պատերազմ յայտնեց: Սկսուեց խիստ
 ու արիւնահեղ պատերազմ: Բռնակալի
 զօրքն երկար ժամանակ չէր ընկճվում:
 Դեւլան ինքն անձամբ զօրքի առաջն ըն-
 կած մասնակցում էր պատերազմին և
 բոլորին զարմացնում էր իւր քաջու-
 թեամբ և տոկունութեամբ: Բայց յաղ-
 թութիւնը կարծես բռնակալի կողմն էր

անցնում. ժողովուրդն ոյժին չէր կարող
 դիմադրել: Յանկարծ, զօրքի միջից դուրս
 եկաւ մի համարձակ և ուժեղ գիւղացի,
 որը որ ժողովրդին համոզել էր խնդրել
 Դեւլային վերադառնալ հայրենիք: Նա
 ցանկութիւն յայտնեց, որ ուզում է մե-
 նամարտել բռնակալ թագաւորի հետ:
 Երկու կողմիցն էլ համաձայնութիւն
 կայացաւ և սարսափելի մենամարտու-
 թիւնը վերջացաւ նորանով, որ բռնա-
 կալը հէնց տեղն ու տեղը վայր ընկաւ:
 Նորա մարդիկ վախեցած ցիր ու ցան
 եղան:

Այդպէսով Դեւլան յաղթութիւնը
 տարաւ և մեծ շքով տօնեց իւր գահա-
 կալութիւնը: Այդ երկրում նորից տիրեց
 կարգ ու կանոն և խաղաղութիւն: Նոր
 կառավարիչը, որ առաջ իւր ժողովրդի
 արհամարանքին էր արժանանում, այժմ
 վայելում էր նոյն ժողովրդի սէրն ու
 յարգանքը: Բոլորն ուրախանում և զար-
 մանում էին նոր թագաւորի իմաստուն

և խելօք կառավարութեան վերայ: Այդ
Դեյլայի աշխատասիրութեան պտուղն էր
այն օրուանից, երբ նա աքսորուեց իւր
հայրենիքից:

Դեյլան շատ անգամ լիշուամ էր այն
գիւղացուն, որն իսկապէս միայնակ վե-
րադարձրեց իրան իւր կորցրած թագա-
ւորութիւնը, բայց ոչ մի տեղ չէր կա-
րող գտնել նորան: Ոչ ոք չէր կարող ա-
սել, թէ ո՞րտեղից էր եկել նա և թէ
այժմ ո՞րտեղ է. երկար ժամանակ նորան
փնտռում էին: Վերջապէս թագաւորը
հաւաքեց իւր բոլոր հպատակներին և
այսպէս շնորհակալ եղաւ նոցանից՝

Ի ուք վերադարձրիք ինձ իմ թագա-
ւորութիւնս, ասաց նա. ուրեմն ընդու-
նեցէք իմ անկեղծ և խորին շնորհակա-
լութիւնս. ձեր քաջութիւնն ու լաւու-
թիւնն ես երբէք չեմ մոռանայ:

Յանկարծ ամբօխի միջից մէկ բարձր
ձայն լսուեց՝

Ո՛չ, թագաւոր, դու ինքդ քեզ հա-

մար ճանապարհ հարթեցիր և նորից
վերադարձրիր քո ժողովրդի սէրն ու
յարգանքը: Անտրտունջ հնազանդելով քո
ճակատագրին և անդադար աշխատելով,
դու արժանացար մեծ փառքի: Մեծ Փօն
վարձատրեց քո աշխատասիրութիւնդ:
Ես բոլորը գիտեմ. ես ամեն տեղ քեզ
հետ էի և ո՛չ մի բոպէ չէի հեռանում
քեզանից: Մի՞թէ դու ինձ չճանաչեցիր:

Եւ ժողովրդի միջից դուրս եկաւ
նոյն այն գիւղացին, որին երկար ժամա-
նակ փնտռում էին: Եւ յանկարծ նա
փոխվում էր՝ կամ այն փայտահատն էր
դառնում, որ Դեյլային առաջին անգամ
հանդիպեց անտառում և սովորեցրեց
փայտ կտրել-կամ դառնում էր նաւավար,
կամ հնդկական քուրմ, կամ հարուստ
վաճառական և վերջապէս դառաւ մի
թեթեւ, թեւաւոր հրեշտակ: Բոլորը չոքե-
ցին նորա առաջ, տեսնելով նորա մեծու-
թիւնը, փայլը և գեղեցկութիւնը:

Եւ նա շարունակեց՝

— «Ես աշխատութեան հրեշտակն եմ, Դեյլա: Ես տեսնում էի, որ ծուլութիւնն ու անհոգութիւնը քեզ աղքատութեան հասցրին, բայց դու չյուսահատուեցիր: Դու սկսեցիր աշխատել և ազնիւ աշխատանքը քեզ նորից վերադարձրեց քո առաջուայ մեծութիւնն ու փառքը: Ով որ չի ուզում աշխատել, ով որ ցանկանում է հանգստանալ առանց չարչարուելու, նա չի կարող վայելել իւր շրջապատողների սէրն ու յարգանքը: Միայն եռանդուն, տոկուն աշխատանքով կարելի է երջանկութիւն ձեռք բերել: Շատ անգամ մէկ անօգուտ կորցրած օրը, երեք ծանր տարիներ է բերում իրան յետևից: Ծոյլ մարդն ինքն իրան կեանքն է փչացնում և ոչ ոքի չի կարող մեղադրել իւր դժբախտութեան համար: Իսկ ջանասէր և գործունեայ մարդը, ընդհակառակն ամեն բանի կը հասնի, երբէք չի յուսահատուի և ամեն դժուար ըոպէներին կը գտնի իրան հա-

մար մի ելք, մի մխիթարութիւն: Մնաս բարև Դեյլա, մի մոռանար ծուլութեան դառն խրատը, և քեզ միշտ օգնող կըլինի ամեն բանի մէջ՝

«Աշխատութեան հրեշտակը:»

Եւ նա յանկարծ անհետացաւ:



ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ



ամանակով ապրում էր Չինաստանում մէկ մանդարին ծու անունով: Նա թագաւորական գեղեցիկ ու շքեղ Գօօկէ-Նան ամարանոցի կառավարիչն էր: Այդ մանդարինն ունէր երկու տղայ: Չնայելով, որ երկու եղբայրն էլ մէկ հօրից և մէկ մօրից էին, բայց նոքա բոլորովին նման

չէին միմեանց ոչ արտաքինով և ոչ էլ բնաւորութեամբ: Մեծ որդին, Կիա-տանն անճոռնի էր, մէկ ոտով կաղում էր, երեսը տգեղ էր ու թմրած և աչքերը մարած էին: Բայց որովհետև նա շատ բարի և քնքոյշ սիրտ ունէր, այդ պատճառով օտարներից ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում նորա անդուր արտաքինի վերայ: Միւս որդին, Վանգ-Պօն, միայն երկու տարով էր փոքր իւր եղբօրից: Այդպիսի գեղեցիկ տղայ դեռ չէր ծնուել աշխարհիս երեսին: Նորա աչքերը մեծ, կապոյտ և մի առանձին տեսակ գրաւիչ ու գեղեցիկ էին, այնպէս որ նորա հայեացքն ամեն մարդու յափշտակում և հիացնում էր. ով որ նայէր նորա վերայ, էլ չէր կարող աչքը հեռացնել նորա սիրուն երեսից: Բայց դորա փոխարէն Վանգ-Պօն շատ վատ, անտանելի բնաւորութիւն ունէր: Իսկ հայրն ու մայրը նորան աւելի երես էին տալիս և փչացնում էին. նոքա նորա ամեն մէկ

ցանկութիւնը կատարում էին, երբէք չէին պատժում նորան, չէին խրատում, այլ միայն գովում և փաղաքշում էին: Մեծ որդու, Կիա-տանի հետ հայրն ընդ-հակառակը շատ խիստ և կոպիտ էր: Բայց խեղճ տղան համբերութեամբ տանում էր հօր վատ ու անարդար վարմունքը: Նորա մայրը, Գօա-սսան, (ցանկալի ծաղիկ) կարծես աւելի յարձակում էր Կիա-տանի վերայ. նա նորա հետ միշտ սառն էր վարվում և չէր ծածկում իւր խորը զգուանքը դէպի մեծ որդին: Գօա-սսան ինքը գեղեցկուհի լինելով, ամաչում էր որ ունի այդպիսի տգեղ որդի. նա ուշա-դրութիւն չէր դարձնում նորա բարի ու լաւ բնաւորութեան վերայ, այլ միայն զգուանքով նայում էր նորա տգեղ երե-սին և անճոռնի քայլուածքին:

Բայց Կիա-տանը ցոյց էր տալիս, որ իբրև թէ չէր նկատում այդ ամենը: Նա միշտ սիրով էր վարվում եղբօր հետ և աշխատում էր նորան բաւականութիւն

պատճառել. թէև Վանգ-Պօն հպարտ ու փքուած էր ընդունում նորա ամեն մէկ ծառայութիւնը: Բոլորը զարմանում էին Կիա-տանի համբերութեան և հեզութեան վերայ: Մինչև անգամ նոցա մի քանի ազգականները փորձեցին Կիա-տանի մա-սին միջնորդել հօր մօտ, բայց Ծուռն սա-ռը պատասխանեց՝ որ իրան տան մէջ տանտէրն ինքն է և թէ կարող է անել այն, ինչ որ սիրտն ուզում է: Եւ այդ օրուանից նա սկսեց աւելի վատ վարուել իւր մեծ որդու հետ:

Փոքր տղային ընծայում էին թան-գազին խաղալիքներ, մրգեր և ամեն տեսակ անուշեղէններ: Կանտօն կամ Փօկիէնա քաղաքներից յատուկ նորա հա-մար բերել էին տալիսնարնջից պատրաս-տուած ամենալաւ քաղցրեղէններ: Թանգ կտորներից շուտ-շուտ կարում էին նորա համար նոր շորեր, իսկ մեծ որդուն տեղ էին տանում հասարակ քաթանէ հալաւով և միայն երբեմն խղճում էին

նորան և թող էին տալիս, որ նա անու-
շեղէնների համը տեսնի, կամ ուրախա-
նայ:

Ծուռ-ի և Գօա-սսա-ի այդ տեսակ
անբնական վարմունքը դէպի մեծ որդին,
Վանգ-պօ-ի վատ կողմերն աւելի զօրե-
ղացնում էին: Նա տեսնում էր, որ հայ-
րըն ու մայրը և տան մէջ բոլորը նորա
չարուծիւնները ներում և չէին բարկու-
նում, իսկ եղբօրից ամեն բան պահան-
ջում և շարունակ վիրաւորում էին նո-
րան, այդ պատճառով Վանգ-պօն էլ սկսեց
եղբօրն ատել, նորա հետ ծառայի պէս
վարուել և ինչքան որ Կիա-տանը նորա
հետ աւելի լաւ ու աւելի բարի լինէր,
նա այնքան գոռգոռում էր նորա վերայ
և ոտքերը գետին էր խփում:

Երկու եղբայրն էլ դասերից յետոյ
հանգստանալու համար միասին ման էին
գալիս պարտէզում և ամեն մէկն իրան յատ-
կացրած անկիւնում ծաղիկներ և զանազան
բոյսեր էր ցանում: Վանգ-պօ-ի փոքրիկ

պարտէզն 'ի հարկէ աւելի գեղեցիկ և աւե-
լի զանազանակերպ էր, որովհետև պար-
տիզպանը նայում էր միշտ և հսկում. նա
ցանել էր այդտեղ և նարկիզ և շուշան
և շատ ուրիշ չինական վարդեր: Իսկ
Կիա-տանի պարտէզում պարտիզպանն
երբէք չէր մտնում: Կիա-տանն ինքն էր
տնկում Վանգ-պօ-ից մնացած մի քանի
թուփեր և ծաղիկներ:

Մէկ անգամ Կիա-տանը շատ ուրա-
խացաւ՝ հօրեղբայրը նսրան մի փոքրիկ
ծառ ընծայեց «կույ-ուա» կոչուած, որի
տերևները նման են դափնի տերևնե-
րին. իսկ ծաղիկները շատ պայծառ և
հոտաւէտ են. այդ ծառը ծաղկում է տա-
րին չորս անգամ և կարող է շատ մե-
ծանալ: Վանգ-պօն էլ իսկ այդ տեսակ
ծառ ընծայ ստացաւ, միայն թէ նորանը
շուտով թառամեց: Երբ Կիա-տանի ծա-
ռը փառաւոր ու հրաշալի կերպով ծաղ-
կեց, նա այդ ծաղիկներից մի փունջ կա-
պեց եղբօր համար: Վանգ-պօն նախան-

ձեց, փոխանակ շնորհակալութիւն յայտ-
նելու Կիա-տանին, փունջը բարկու-
թեամբ գետին գցեց և կոխկառեց:

Խեղճ Կիա-տանն ամեն առաւօտ վա-
զում էր իւր պարտէզը, տեսնելու և
հիանալու այդ ծաղկած ծառի վերայ. նա
ջրում էր կանոնաւոր և ամեն խնամք
տանում էր նորա համար:

Բայց ինչպէս նա յուսահատուեց,
երբ մէկ առաւօտ տեսաւ, որ իւր սիրած
ծառի ճիւղքի վերայ երեք մեծ մեխ է
ցցուած... Մեխերը ծածկուած էին հողով
և չոր տերևներով, բայց Կիա-տանը նը-
կատեց այդ: Նա սաստիկ տխրեց, որ
մէկն ուզեցել է փչացնել ծառը. նա
բռունցքները սեղմեց և արտասուքները
վազեցին նորա աչքերից: Վանգ-պօն քիչ
հեռու կանգնած էր և մռայլ երեսով
ծաղիկներ էր քաղում: Նորան տեսնելով
Կիա-տանը սկսեց կասկածել... Բայց ոչ,
այդ անկարելի է. միթէ հարազատ եղ-
բայրս իմ թշնամին է... նա էլի մէկ

անգամ նայեց եղբօր վերայ: Վանգ-պօն
աչքերը գետին գցած և ալլալլուած կանգ-
նած էր... կասկած չկայ, այդ նա է:
Արիւնը Կիա-տանի գլուխը խփեց. կուրծ-
քը սեղմուեց և շունչը բռնուեց. նա
վայրենաբար գոռաց և յարձակուեցաւ
չար տղայի վերայ: Թոյլ Վանգ-պօն վա-
խեցաւ. նա չոքեց եղբօր առաջ, խոստո-
վանեց իւր արածը և ներողութիւն
խնդրեց: Իսկ Կիա-տանը կատաղած էր
և ոչինչ չէր լսում. նա արդէն ձեռքը
բարձրացրել էր և ուզում էր եղբօրը
խփել, բայց թոյլ ու գունատ Վանգ-պօն
այնպէս խղճալի և մեղմ հայեացքով նա-
յում էր նորա վերայ ու լալիս, որ Կիա-
տանի ձեռքերը թուլացան և նա էլ սկը-
սեց լալ: Վանգ-պօն փաթաթուեց եղբօ-
րը և ջերմ համբուրեց նորան: Նա խնդ-
րեց Կիա-տանին մոռանալ իւր վատ վար-
մունքը: Ծառը թառամեց: Հայրն ու
մայրը Կիա-տանին յանդիմանեցին անհո-
գութեան համար, իսկ նա երջանիկ էր,

որ թէև զրկուեց իւր սիրուն ծառից,
բայց դորա փոխարէն եղբայրը հաշտուեց
իրան հետ:

Այդ օրուանից Վանգ-պօն երկար
ժամանակ հաշտ էր ապրում եղբօր հետ.
գուցէ նա վախենում էր Կիա-տանից,
կամ թէ նորա խիղճը տանջում էր...
Այսպէս թէ այնպէս Վանգ-պօն իրան
լաւ էր պահում և ոչ մի վատութիւն
չէր անում: Այլ օր մինչև անգամ նա
խնդրեց Կիա-տանին, որ նաւակով միա-
սին գնան ձուկ բռնելու, թռչունների
օգնութեամբ:

Չինաստանում հին ժամանակից մը-
նացած է ձուկ որսալու այս սովորու-
թիւնը՝ վերցնում են իրանց հետ մի
թռչուն, որը կոչւում է ծովային ագռաւ,
նստում են նաւակ և գնում են: Յետոյ
մի ձուկ տեսնելիս թիերով խփում են
ջրին. այդ նշանից սովորած թռչունն
ընկնում է ջուրը, ձուկը բռնում, բե-
րում է նաւակի մէջ և որպէս զի թըռ-

չունը ձկանը կուլ չտայ, նորա վզին ա-
մուր կապում են մի օղակ: Եթէ որ
թռչունը հանդիպում է մեծ ձկան և
մենակ չի կարողանում նորան յաղթել,
այն ժամանակ եթէ նաւակի մէջ էլի
այդ տեսակ թռչուններ են լինում, նո-
քա հասնում են օգնութեան և միասին
ջրից դուրս են քաշում ձկանը:

Կիա-տանն ուրախութեամբ համա-
ձայնեց եղբօր հետ միասին գնալ ձուկ
որսալու: Նոքա ամեն մէկը ջուկ-ջուկ նա-
ւակներ և մի քանի թռչուններ վերցրին
և ամբողջ առաւօտը պարապեցին այդ
զուարճալի գործով: Բայց Վանգ-պօ-ն
չէր յաջողվում. արդեօք նա վատ տեղ
էր ընտրել, թէ նորա թռչունները լաւ
վարժուած չէին և նա միայն հինգ փոք-
րիկ ձուկ բռնեց. իսկ Կիա-տանի զամ-
բիւղը լիքը լցուել էր: Վանգ-պօ-ն սըր-
տում նորից վատ ու չար զգացմունքներ
առաջ եկան. նա սաստիկ նախանձուեց
եղբօրը և տխուր ու քարկացած վերա-

դարձաւ տուն, չնայելով որ Կիա-տանն
 առաջարկեց նորան բոլոր ձուկը հաւա-
 սար բաժանել: Հէնց որ տուն մտաւ
 Վանգ-պօն, ընկաւ մօր գիրկը և լաց
 եղաւ: Գօա-սսան անհանգիստ կերպով
 սկսեց նորան հարց ու փորձ անել, թէ
 ինչո՞ւ է լալիս, բայց նա ոչինչ չէր պա-
 տասխանում: Հայրն եկաւ և նա էլ վա-
 խեցած հարցրեց, թէ ի՞նչ է պատահել.
 բայց Վանգ-պօն բոլոր ժամանակ լալիս
 էր և չէր պատասխանում: Վերջապէս
 նա լալով պատմեց, որ եղբայրն իրանից
 բոլոր ձկները խլել է, նախանձուելով,
 որ իրան չէ յաջողուել շատ որսալ: Կիա-
 տանը կարծես կայծակնահար եղաւ, լսե-
 լով եղբօր այդ զզուելի ստախօսութիւնը.
 նա բոլորովին գունատուեց և լուռ կանգ-
 նած մնաց, ատամները կրճտացնելով:
 Այդ րոպէին նորա երեսը չար և վատ
 արտայայտութիւն ունէր: Հայրն յետ դա-
 ռաւ և գոռաց Կիա-տանի վերայ՝

Ողորմելի՛, այդ արդէն չափն ան-

ցաւ... զուր չէ, որ դու այդպէս տգեղ
 ես. քո սիրտն էլ այդպէս չար է: Կորիւր
 աչքիս առաջից անիծուած և էլ չհամար-
 ձակուիս ինձ երևալ:

Խեղճ Կիա-տանը հօր արհամարհան-
 քից և եղբօր ցածութիւնից ընկճուած,
 լուռ ու մունջ դուրս եկաւ սենեակից.
 գնալիս նա նայեց եղբօր վերայ ցաւելով
 և լուռ յանդիմանութեամբ: Վանգ-պօն
 յանկարծ ամաչեց և խղճաց եղբօրը, զգա-
 լով թէ որչափ մեղաւոր է Կիա-տանի
 առաջ. բայց այնուամենայնիւ նա քաջու-
 թիւն չունեցաւ խոստովանելու իւր ա-
 նարդար վարմունքը, այլ միայն մօրը
 սաստիկ խնդրեց, որ նա ներէ Կիա-տա-
 նին: Ծնօղները վերջապէս Վանգ-պօ-ի
 խնդիրը կատարեցին և երկար ժամանակ
 պատմում էին ամենքին նորա բարու-
 թեան և անյիշաչարութեան մասին:

Եւ ահա այդպէս անցնում էր այդ
 երկու եղբայրների երեխայութիւնը: Մէկը
 շարունակ համբերում, տանում էր ամեն

անարդարութիւն, զրկանք, իսկ միւսը տես-
 նում էր միայն սէր, քնքշութիւն և անմիտ
 փաղաքշանք: Վերջապէս նոքա մեծացան,
 ուսումներն աւարտեցին, քննութիւն
 տուին քաղաքական ծառայութեան մէջ
 մտնելու համար և մանդարինների շար-
 քըն անցան: Կիա-տանը թէև ուսումնա-
 կան էր, բայց առաջ չէր գնում. նորա
 արտաքինը կարծես ամեն տեղ նորան
 հալածում էր և կեանքը դժբախտացնում
 էր: Երեխայ ժամանակ ծնողներից ան-
 դադար ճնշումն և խստութիւն տեսնե-
 լով, նա դառել էր մռայլ և վայրենի.
 նա հաւատով չէր վերաբերում դէպի
 մարդիկ և երբեմն էլ չէր հաւատում
 իւր ընդունակութիւններին: Այդ պատ-
 ճառով նորա վերայ շատ քիչ ուշադրու-
 թիւն էին դարձնում: Իսկ Վանգ-պօն,
 ընդհակառակն ամեն տեղ յաջողութիւն
 էր գտնում. նորա արտաքինը գրաւում
 էր ամենքին, իսկ բնական խորամանկու-
 թիւնն ու ճարպկութիւնը շուտով նորան

առաջ տարան կեանքի մէջ: Նա աստի-
 ճանաբար զանազան աչքի ընկնող պաշ-
 տօններ ունեցաւ և վերջապէս եղաւ մա-
 գիստրոս (տա-գիօ-սսէ) և գեղեցիկ Գու-
 Կանգ նահանգի կառավարիչ նշանակուեց:
 Նա կարողանում էր փարպետութեամբ
 ծածկել իւր պակասութիւնները և շու-
 տով թագաւորի ու ժողովրդի սիրելին
 դառաւ: Ծնողներն աւելի հիանում էին
 նորա վերայ և գովում էին. մանաւանդ
 նոցա յափշտակութիւններին էլ վերջ չը-
 կար, երբ իմացան, որ Վանգ-պօն Կիա-
 տանին, որը մռայլ ու տարօրինակ մար-
 դու անուն էր ստացել, իւր մօտ գըլ-
 խաւոր գանձապահի պաշտօն էր տուել:
 Ճակատագիրը Վանգ-պօնին ժպտում
 էր և տալիս էր նորան ամեն բան, ինչ
 որ նա ցանկանում էր: Ծառայութեան
 գործերով նա չէր պարապում, այլ միայն
 ընկնում էր անօգուտ զուարճութիւննե-
 րի և բաւականութիւնների յետևից. բայց
 միևնոյն ժամանակ նա այդ ամենը ճարպ-

կութեամբ կարողանում էր ծածկել և ամենքի մօտ պարզերես էր դուրս գալիս: Այդ պատճառով ոչ ոքի մտքից չէր անցնում կասկածել նորա վերայ, երբ կայսերական վերակացուներն երկրորդ անգամ յայտնեցին Պեկինի խորհրդին, որ Վանգ-պօ-ի կառավարած նահանգում դրամական զեղծումն է առաջ եկել: Վանգ-պօն իրան պաշտպանելու համար սկսեց վրդովուած խօսել, որ մինչև այդ ժամանակը չէ գանգատուել գլխաւոր գանձապահի վերայ միայն այն պատճառով, որ չէր վճռում մեղադրել իւր հարազատ եղբօրը: Իսկ այժմ, իւր քաղաքացիական պարտականութիւնը կատարելու համար ստիպուած է իսկական մեղաւորին ցոյց տալ...

Կիա-տանին բերին դատաւորի մօտ: Նա այնպէս քաջութեամբ և համոզիչ կերպով պտշտպանվում էր, որ դատաւորները տատանւում էին... նոքա պարզ տեսնում էին նորա անմեղ լինելը.

բայց բոլոր մեղադրանքները նորա դէմ էին: Իսկական մեղաւորը՝ Վանգ-պօն, այնքան մեղադրանքներ էր բարդել նորա վերայ և այնքան սուտ վկաներ էր կաշառել, որ Կիա-տանին անհնար էր արդարանալ: Նա, որ միշտ բարեխղճութեամբ կատարում էր իւր գործը և երբէք, ոչ մի բանում իրան չէր կարող մեղադրել, եղբօր պատճառով պէտք է զոհուէր սարսափելի կորստեան... Կիա-տանը գուշակեց թէ որտեղից է իրան հասել այդ ծանր մեղադրանքը և... դարձեալ մէկ անգամ ներեց իւր եղբօրը...

Կիա-տանին մեղադրեցին հասարակական փողերը ծախսելու մէջ և մահի դատապարտեցին: Նա սառնասիրտ լսում էր դատաւորի վճիռը՝ կեանքը նորա համար քաղցր չէր: Վանգ-պօն թէև արդարացաւ եղբօրը մատնելով, բայց նա չէր ուզում այդպիսի ծանր մեղքն իրան վրդին առնել՝ եղբայրասպան լինել... նա

իրան երևցնում էր չափազանց տխուր
և թագաւորին տեսնելիս չոքեց նորա ա-
ռաջ և խնդրեց ներել Կիւտանին՝

— Ես ամեն բանով պարտական եմ
ձերդ մեծութեանը, բայց էլի մէկ ողոր-
մութիւն եմ խնդրում. ձեզանից: Իմ դրժ-
բախտ եղբայրս զուարճութիւնների յե-
տևից ընկած, մոռացել է իւր պարտա-
կանութիւնները և գանձարանը դատար-
կել է: Նա մեղաւոր է, ես չեմ վիճում
և նա պէտք է պատժուի. բայց մի՞թէ
ձերդ մեծութիւնը կըհրամայէ մահուան
դատավճիռ յայտնել իմ հարազատ եղբո-
րըս վերայ: Ես նորան տուի գանձապա-
հի պաշտօն. ես շատ մեղաւոր եմ, որ
նորան լաւ չէի հետևում, բայց ներեցէք
ինձ իմ այդ մեղքիս համար. թեթեա-
ցրէք եղբօրս պատիժը: Ես աղաչում եմ
ձերդ մեծութեանն արտասուքն աչքե-
րիս — այդ շնորհն արէք իմ և իմ փա-
ռաւոր նախորդներիս ծառայութիւնների
համար:

Թագաւորն երկար ժամանակ տա-
տանվում էր, որովհետև Չինաստանում
շատ խիստ կերպով քննվում է հասարա-
կական, կամ տէրունական փողերի հա-
շիւը: Բայց վերջապէս նա մեղմացաւ խո-
րամանկ շողոքորդի խօսքերից:

— Ես ձեր եղբօր պատիժը կըթե-
թեւացնեմ, ասաց նա Վանգ-պօին. թէև
այդ շատ վատ օրինակ կըլինի քաղաքա-
ցոց համար: Թող այս մի նոր ապացոյց
լինի, որ ես ձեզ յարգում եմ. յայտնեցէք,
որ ես հրամայում եմ նորան աքսորել
տասը տարով տաժանակիր աշխատանքի:
Դուք էլ աշխատեցէք հանգստանալ և
մոռանալ, որ ունէք այնպիսի մի եղբայր,
որը միայն խայտառակում է ձեր ընտա-
նիքի անունը և շտրունակեցէք նոյն սըր-
տով ու եռանդով ծառայել ձեր երկրին:

Կիւտանին յայտնեցին նոր վճիռը:
Դորանից յետոյ ամենքը գովում էին
Վանգ-պօի վարմունքը. բոլորը խօսում
էին նորա մեծահոգութեան և եղբայր-

սիրութեան մասին, չնայելով որ եղբօր համար խնդրելով, նա կարող էր արժանանալ թագաւորի բարկութեանը: Կիատանը դառը ժպտաց և աչքերն երկինք բարձրացրեց, կարծես արդարութիւն էր խնդրում: Երեք օրից յետոյ Կիատանը բամբուկի մտրակով հարիւր հարուած ստացաւ անամօթ Վանգ-պօ-ի և անհամար ժողովրդի աչքերի առաջ: Ժողովուրդը իսկական մեղաւորին թողած, ավստուամ էր, որ թագաւորի փոխանորդն այդպիսի անպիտան և աւազակ եղբայր ունի: Յետոյ Կիատանի ոտքերն ու ձեռքերը շղթայով կապեցին և տարան աքսոր:

Պատահամբ նորան տարան Գօօկէ-շան ամրոցի կողքից: Նա տեսնելով իւր հայրենի տեղերը, որտեղ անց էր կացրել իւր երեխայութիւնը, չկարողացաւ արտասուքները զսպել: Ծու, Կիատանի հայրը և Գօա-սսա նորա մայրը հանգրտանում էին գերեզմանում: Կիատանը

մօտենալով ծնօղների շիրիմներին, տխուր և յուզուած չոքեց նոցա առաջ և սկսեց աղօթել: Նա խնդրում էր նոցանից իրանց օրհնութիւնը, ներում էր այն բոլոր վիրաւորանքները, որ նոքա հասցնում էին իրան երեխայ ժամանակը: Նոցա օրհնութիւնը խնդրում էր և եղբօր համար: Այդ կարճ աղօթքից յետոյ նա վերկացաւ, վերջին անգամ իւր մնաս բարեն ասաց հայրենի տեղերին և տխուր ու տրտում շարունակեց ճանապարհը: Բայց նա դեռ հազիւ մի քանի քայլ էր արել, երբ տեսաւ իրան կողքից անցնող մի փառաւոր գնացք: Այդ Վանգ-պօն էր, որ իւր պալատականներով գնում էր թագաւորի մօտ: Տեսնելով Կիատանին շղթայակապ, ողորմելի աւազակը գլուխը շուռ տուեց:

— Մնաս բարե, եղբայր, տխուր բայց առանց չարութեան ասաց Կիատանը. եղիւր երջանիկ եթէ կարող ես. դու իմ ամբողջ կեանքս խորտակեցիր, բայց ես չեմ անիծում քեզ. ես դարձեալ չեմ կա-

րող մոռանալ, որ դու իմ հարազատ եղբայրն ես: Մնաս բարև յաւիտեան...

Մայիսի սկզբներին, Վու-Շանգի շրջականերում, որը Գու-Կանգի մայրաքաղաքն է, մեծ տօն էր կատարվում, որ կոչւում էր «Կովի» տօն: Բոլոր գիւղացիք բերում էին իրանց հետ, որը սայլով, որն ուսերին դրած-մաճեր, տափաններ, թիեր ու փոցխեր և այդ բոլոր բազմութիւնն երաժշտութեան ու խեղկատակների պարերի և ծափահարութիւնների հետ միասին, գնում էր մի կաւից շինած կովի յետևից, որն ունէր ոսկի եղջիւրներ: Կովին մտրակով քշում էր մէկ փոքրիկ տղայ, որի մի ոտին կօշիկ կար, իսկ միւսը մերկ էր — ասում են, որ այդ աշխատանքի և ջանասիրութեան նշանն է: Այդ ամբողջ հանդէսը դաշտերից անցնելով մօտենում էր փոխարքայի պալատին: Այդտեղ, նորա պատուհանների առաջ կուրեցին կաւէ կովը, և նորա միջից հանելով մի քանի փոքրիկ

կովեր, բաժանեցին պալատում ժողովուած բոլոր նշանաւոր հիւրերին: Յետոյ փոխարքան ճառ խօսեց հողագործութեան օգտի մասին և տօնը վերջացաւ զանազան խաղերով և ընդհանուր պարերով: Այդ տօնը վերջանալուց յետոյ Գու-կանգի կառավարիչը գնաց իւր ամարանոցը: Նանապարհին նորա վերայ յարձակուեց զինուած խռովարարների մի խումբ: Փոխարքայի թիկնապահներից շատերը սպանուեցին, իսկ մնացածները փախան: Փոխարքան մնաց մենակ, առանց զէնքի և առանց օգնութեան: Խռովարարները գոռում էին՝

— Մահ բարբարոսին, բաւական է, ինչքան որ նա մեզ տանջեց. թագաւորը չի ընդունում մեր բողոքները նորա մասին և ահա մենք մեր դատաստանը կ'անենք:

Վանգ-պօն (այդ նա էր) քաջութեամբ պաշտպանվում էր, բայց նորան վիրաւորեցին և նա անպատճառ կրկոր-

չէր, եթէ որ մացառների միջից դուրս
չթռչէր մէկ գուռնատ, նիհար և ցնցոտի-
ներով ծածկուած մարդ և չընկնէր Վանգ-
պօ-ի ու խռովարարների մէջ:

— Թշուառականներ, գոռաց նա,
դուք աւելի շուտ ինձ կըսպանէք, քան
իմ եղբօրս: Այն ժամանակ խռովարար-
ներն յարձակուեցին նորա վերայ և մի
րոպէում գետին գլորեցին նորան: Յետոյ
նոքա ուզեցան սպանել և Վանգ-պօ-ին,
բայց այդ րոպէին, նորան օգնութեան
հասաւ զօրքերի մի գունդ և ցրուեց
խռովարարներին:

Խեղճ, ցնցոտիներ հագած մարդուն,
որը դեռ շուտ էր, բարձրացրին և ինչ-
պէս մեծ եղաւ բոլորի զարմանքը, երբ
ճանաչեցին ամենից անպատուած և
մոռացուած Կիա-տանին: Նա մի րոպէ
բացեց իւր մարած աչքերը և ասաց թոյլ
ձայնով՝

— Ամեն բան վերջացած է մեր մէջ
եղբայր: Ես իմ պատժի ժամանակը, տա-

սը տարին լրացրի և ուզեցայ հօրս ու մօրս
գերեզմանը համբուրել: Ճանապարհին ես
յանկարծ մի ձայն լսեցի: Ես ճանաչեցի
այդ ձայնը... վազեցի օգնութեան... Ես
երջանիկ եմ, որ փրկեցի քո կեանքը...
Ահա թէ ինչպէս վրէժս առայ քեզանից
եղբայր...

Վանգ-պօն նայում էր նորա վերայ
խորը տխրութեամբ. արտասուքը խեղ-
դում էր նորան և նա բռնելով մեռնող
եղբօր ձեռքը պինդ համբուրեց...

Վանգ-պօն մեծ շքով թաղեց եղբօ-
րը, իսկ մի քանի օրից յետոյ նա թողեց
իւր բարձր պաշտօնը և մտաւ մի վանք,
որտեղ և անցկացրեց իւր մնացած օրերը:
Ոչ ոք չգիտէր, թէ ինչո՞ւ Վանգ-պօն
հեռացաւ վանք: Միայն մահուանից քիչ
առաջ նա թագաւորին մանրամասն գրեց
բոլոր ճշմարտութիւնը, իւր և Կիա-տան
եղբօր մասին: Նա այդ գրով խնդրել էր
թագաւորին, որ վերականգնէ ճշմարտու-

Թիւնը և Կիա-տանի անուներ մտցնէ իւր նախորդներին ցուցակի մէջ:

Այդ ամենը կատարեց թագաւորը և կեանքի մէջ հալածուած ու անբաղդ Կիա-տան մանդարինի լիշատակին մի արձան կանգնեցրեց նոյն այն տեղում, որ տեղ որ նա ազատել էր իւր եղբօր կեանքը: Արձանի վերայ փորագրուած էր՝ «Պալ-լէու երկու եղբայրների:»



ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ



Սարնանային մի հըրաշալի առաւօտ, Չինաց ծերունի Շուեն անունով թագաւորը զբօսնում էր պալատիսլարտէզում, իւր առաջին նախարար

մանդարին Իու-ի հետ: Նախարար Իուեն հասարակ դասակարգից էր և այդպիսի բարձր պաշտօն ստացել էր միայն իրան անձնական ծառայութիւնների համար: Նո-

րան յանձնուած էր ուղղել երկրին հասած այն չարիքները, որ առաջ էին եկել երկու մեծ գետերի բարձրանալուց: Նա այնպէս խելօք և բարեխղճութեամբ կատարեց իւր այդ պարտականութիւնը, որ միանգամից ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեց և ամենքին յայտնի եղաւ նոր անունը: Ասում են, որ դեռ մինչև հիմայ էլ նորա ձեռնարկած այդ տարօրինակ ձեռագործի և շինութիւնների հետքերն երևում են, չնայելով որ այն ժամանակից անցել է արդէն չորս հազար տարուց աւելի:

Կայսրը և նախարարը հագել էին հասարակ, սպիտակ քաթանէ զգեստ: Նոքա երկուսն էլ խորը մտածմունքների մէջ ընկած, կամաց-կամաց անց ու դարձ էին անում պարտէզում և լուռ հիանում էին զարնան առաջին ու պայծառ արևի ճառագայթներից: Մունն յանկարծ կանգնեց, բարձրացրեց դէպի երկինք իւր դող-

դողիւն ու կնճռոտ ձեռքերը և հառաչելով ասաց՝

Ո՛հ, սրչափ ծանր է երկիր կառավարելը: Ի՛նչպէս դժուար է ձեռք բերվում իսկական և իմաստուն կառավարութիւնը: Հասցնել ժողովրդին աշխարհիս բոլոր բարիքը, պաշտպանել նորան ամեն մէկ ցաւից, մանաւանդ վառ պահել նորա մէջ բարի և ազնիւ ցանկութիւններ՝ ահա՛ դոքա պէտք է լինին ամեն մէկ թագաւորի առաջին և սուրբ պարտականութիւնը: Արդեօք ես կատարում եմ այդ ամենն ինչպէս հարկն է: Իմ յարգելի նախորդս, Իսօն ամեն տեղ խաղաղութիւն և հանգստութիւն էր տարածում: Նորա ուշադիր և հոգատար աչքը տեսնում էր ամեն բան, լինում էր ամեն տեղ, չէր մոռանում աղքատներին, թշուառներին, անօգնականներին. առաջ էր քաշում խելօք ու հանճարեղ մարդկանց և հեռացնում էր անհոգներին, ծոյլերին: Իսկ ես կարողացել եմ արդեօք

գոնէ քիչ չափով նմանել նորան:

Նախարարն յարգանքով ողջունեց թագաւորին և պատասխանեց՝

— Մեր տէրութիւնը չի կարող գանգատուել վատ կառավարութեան համար: Ամեն տեղից և ամենքի բերանից լսվում են գովեստներ մեր իմաստուն Շուն թագաւորի մասին:

— Ես ինձ չեմ խաբում, իմ հաւատարիմ Իու: Ժողովուրդն երբէք ինձ այնպէս չի սիրի, ինչպէս որ սիրում էր արժանաւոր Իաօ-ին: Մէկ անգամ Իաօն ման էր գալիս քաղաքի հեռու մասերում և ահա թէ ինչ երգ լսեց երեխաների բերանից՝

«Ոչ ոք այնպէս չէ կառավարել երկիրը, ինչպէս իմաստուն, պատուական Իաօն, Իու ոչ ոքի չես մոռացել, չես մերժել, Եւ ոչ ոք էլ քեզ չի մոռանայ Իաօ:»

— Բայց իմ մասին այդպէս չեն երգի:

— Շողոքորդութիւնն աշխարհիս երեսին ամեն բանից վատ է, ասաց Իուն,

բայց ճշմարտութիւնն ես պէտք է ասեմ իմ թագաւորին: Հիմայ էլ խնդրում եմ ձերդ մեծութեանը շողոքորդութիւն չըհամարէք, եթէ ասեմ որ թէ մանդարինները և թէ հասարակ ժողովուրդը տէրութեան ամեն կողմերից օրհնում և գովաբանում են ձեզ: Ժողովուրդը սիրում է իւր բարի թագաւորին և օրհնում է այն օրը, երբ Իաօն ձեզ կարգեց իւր տեղը: Թող այս ըոպէիս մեռնեմ, եթէ որ սուտ եմ ասում:

Իուն այդ խօսքերն այնպէս անկեղծ և համոզիչ կերպով ասաց, որ թագաւորի աչքերն արտասուքով լցուեցին: Նա իւր ձեռքը մեկնեց նախարարին, որը և յարգանքով համբուրեց:

— Ես քեզ հաւատում եմ, իմ ազնիւ խորհրդատու, ասաց Շունը. կարելի է ժողովուրդն ինձ նոյնպէս սիրում է, որովհետեւ ես աշխատել եմ ամեն բանի մէջ նմանել իմաստուն Իաօ-ին և պահպանել եմ նորա սահմանած օրէնքները:

Բայց դու գիտես, որ մէկ մարդու համար շատ դժուար է այսպիսի մի մեծ գործ կատարելը, ինչպիսին որ տէրութիւն կառավարելն է: Իսկ թագաւորը մենակ է. նա իւր աչքերով չի կարող ամեն բան տեսնել, ինչ որ ուրիշ տեղերում կատարվում է նորա տէրութեան մէջ: Եւ թէև իմ հաւատարիմ Իուն ամեն դէպքում ինձ օգնում է, բայց այնուամենայնիւ իմ կառավարութեանս ձեռքէլ երբեմն պատահում են անարդարութիւններ հակառակ մեր կամքին և չընայելով մեր հսկողութեանն ու ուշադրութեանը:

— Բայց չէ՞ որ իմ թագաւորը երեք տարին մէկ անգամ ինքն անձամբ քըննում է իւր մանդարիներէ գործերը. մի՞թէ մանդարիները ճշգրտութեամբ չեն կատարում բոլոր ձեր հրամանները և օրէնքները, ասաց նախարարը:

— Այո, Իու, բայց ես դարձեալ կասկածում եմ և հաստատ համոզուած չլի-

նելս ինձ սաստիկ անհանգըստացնում է: Ես ինքս չեմ կարող ամեն բանին հսկել, այն ինչ բոլորի պատասխանատուն ես եմ. մի որևէ աստիճանաւորի ամեն մէկ անօրէն գործը ծանրանում է իմ խղճիս վերայ: Մի ինչ որ իմաստուն ասել է «Հեռացրո՛ւ նոցա, որոնք անարդար են վարվում և վարում են վատ կեանք:» Բայց ի՞նչպէս ջոկել լաւերին վատերից. չար բանն երբեմն կարող է ծածկուել շողոքորդութեան տակ: Արդեօք չէ՞ս կարող մի միջոց գտնել ճշմարտութիւնն իմանալու, իմ հաւատարիմ խորհրդատու:

— Չար մարդիկ համարեա՞ միշտ խորամանկ են բարիներից. բայց կառավարչի սուր աչքից ոչինչ չի կարելի ծածկել, պատասխանեց նախարարը:

Եւ այդպէս, շարունակելով անց ու դարձ անել պարտէզում, Շուն և Իուն քննում էին այդ նշանաւոր հարցը: Բայց նոքա ոչ մի եզրակացութեան չեկան: Թագաւորն արդէն կամենում էր հեռա-

նալ, երբ յանկարծ նախարարի գլխումը մի երջանիկ միտք ծագեց:

— Իժուար չէ իմանալ, ասաց նա, թէ ձեր մանդարիններից ո՞րն արդարադատութեան և բարութեան պաշտպանն է: Իսկոյն ժամանակ չկայ այդ բացատրելու, որովհետև այնտեղ-պալատում արդէն բոլորը հաւաքուած մեզ են սպասում, որ ժողովը սկսուի, բայց վաղը, տէր իմ, ամեն բան պարզ կըլինի ձեզ համար:

Իսկն շատ հասարակ և պարզ միջոց հնարեց թագաւորին մօտիկ մանդարիններին փորձելու: Այդ միջոցը կայանում էր նորանում՝ որ թագաւորը պէտք է մանդարիններից մէկն ու մէկին ցոյց տար իւր անբարեհաճ լինելը և այդ պատճառով դիտմամբ պէտք է ընտրէր նոցանից ամենալաւին, ամենաազնւին: Եւ ով որ վճռուէր թագաւորի առաջ պաշտպանել մեղադրուածին, նա պարզ կ'ապացուցանէր իւր անկեղծութիւնն ու ճշմարտասիրութիւնը: Իսկ

ով որ ընդհակառակը քաջութիւն ունենար մեղադրելու, զրպարտելու անմեղին, թագաւորին դուր գալու համար, նա դորանով ցոյց կըտար իւր վատ, կեղծ և շողոքորդ սիրտը:

Հետեւեալ օրը, առաւօտուայ ժամը տասն և մէկին, Շունը նստած էր խորհրդի դահլիճում, պատուհանի առաջ, նախարարների, երկու գլխաւոր մանդարինների և ուրիշ պալատականների հետ միասին: Յանկարծ նա տեսաւ հրապարակի վերայ մէկ հարբած մարդ:

— Իարձեալ, գրգռուած բացակսնչեց թագաւորը. չէ որ ես խստիւ պատուիրել եմ փայտով խփել նորան, ով որ կը համարձակուի այդ աններելի զուարճութեան յետևից ընկնել: Բայց ես տեսնում եմ, որ իմ նախարարներս այլ ևս ինձ չեն լսում. նոքա չեն կամենում, կամ չեն կարող ստիպել ժողովրդին, որ պահպանեն օրէնքները:

Իշխանները զարմացած իրար նայե-

ցին և նոցանից ոչ ոք մի խօսք չարտասանեց:

Թագաւորը բարկացած հարցրեց՝ ո՞ւր է կարգապահութեան նախարարը, ի՞նչ է անում նա:

Կուէին հիւանդ է, պատասխանեց առաջին նախարարը. նա մինչև անգամ չկարողացաւ ժողովի գալ:

— Նա իւր պարտականութիւնները չէ կատարում, ասաց թագաւորը. նորան ես հրամայել եմ երեխաներին սովորեցնել երաժշտութիւն և երգեցողութիւն այն նպատակով, որ ժողովուրդը հեռու մնայ հարբեցողութիւնից և զեղխութիւնից: Բայց նա ինչպէս երևում է չէ կատարում իմ հրամաններս. ոչ ոք չի պարապում երաժշտութեամբ և ժողովուրդը սկսել է հարբել:

— Բայց Կուէին շատ գիտնական է և հիանալի նուագում է, ասաց Ծուին, ժողովրդական աշխատութեան նախարարը:

— Մարդ կարող է շատ բան գիտենալ, բայց նորա գիտութիւնը համեմատաբար չնչին է չգիտցածից: Ես տեղեկութիւն ունիմ, որ Կուէին շատ է խօսել ժողովրդի հետ այնպիսի առարկաների մասին, որ բոլորովին հարկաւոր չէր... նա խօսքը գաղտնի պահել չգիտէ: Ես այդպիսի մարդու վարմունքը չեմ կարող համբերել. նոքա մարդկանց մէջ սերմանում են թշնամութիւն և թշուառացնում են անմեղ ժողովրդին: Ինչու գըլխաւոր վերաքննիչն ինձ չնախազգուշացրեց այդ մասին:

Գլխաւոր վերաքննիչ Լուսգը շտապեց մեղքը հեռացնել իրանից և միևնոյն ժամանակ հաստատեց թագաւորի ծանր մեղադրանքն անմեղ Կուէի դէմ:

— Կուէին լիրաւի վերջին ժամանակներս շատ աւելորդ բաներ խօսեց ժողովրդի առաջ, բայց ես երբէք չէի հաւատում, որ այդպիսի բարձրաստիճան մանդարինը կարող է այդքան յանդուգն լինել:

Բոլորը զարմացած լսելով վերաքըն-
նիչի պատասխանը, իրանց հայեացքը գը-
ցեցին առաջին նախարարի վերայ և ան-
համբեր սպասում էին, թէ ի՞նչ կ'ասէ
նա: Բայց Իուն լուռ էր: Իսկ թագաւորը
շարունակում էր զայրանալ խեղճ Կուէի-ի
վերայ, որի մտքից չէր էլ անցնում, թէ
յանկարծակի ինչպիսի դժբախտութիւն
պիտի թափուի իւր գլխին: Բոլորն յար-
գում էին Կուէի-ին նորա խելքի, ճշմար-
տասիրութեան և տաղանդի համար: Բայց
երբ ինքը թագաւորն սնդադար յարձակ-
վում էր նորա վերայ, համարեա՞ ոչ ոք
չվճռուեց անմեղին պաշտպանել այդ սուտ
մեղադրանքից: Ամեն մէկն աշխատում
էր քար գցել նորա վերայ, որպէս զի
դորանով թագաւորի սիրտը շահէ:

— Խօսք չկայ, որ Կուէին շատ տա-
ղանդաւոր մարդ է, ասաց մէկը. բայց
նա չափազանց հպարտ և փառասէր է.
նա այնպէս խիստ է խօսում, որ չի լը-
ռում մինչև անգամ թագաւորի առաջ:

— Նա շատ նախանձոտ է, ասաց
մէկ ուրիշը:

— Նա իրան մինչև անգամ ամենախի-
մաստուն Նուն թագաւորից խելօք է հա-
մարում, խօսեց երրորդը:

Վերջին մեղադրանքը մանաւանդ շատ
սիրով կրկնում էին ամենքը: Բոլորը գիտէին,
որ թագաւորը սիրում և լաւ հասկանում է
երաժշտութիւնը. նա մինչև անգամ յօրի-
նած ունէր շատ երգեր, որոնք երգվում էին
ժողովրդական և կրօնական հանդէսների
ու տօների ժամանակ: Այդ պատճառով
շատերը կարծում էին, որ Կուէի-ին աւե-
լի կըվնասեն, պնդելով թէ նա երաժշ-
տութեան մէջ թագաւորից աւելի տա-
ղանդաւոր է համարում իրան: Եւ քանի
որ նոքա Կուէի-ին աւելի ու աւելի զըր-
պարտում էին, այնքան կարծես թագա-
ւորի բարկութիւնը սաստկանում էր:
Միայն Իուն և էլի մի քանի նախարար-
ներ փորձում էին Կուէի-ին պաշտպանել,
բայց թագաւորը նոցա չէր լսում: Կուէի-ի

Թշնամիներն ուրախանում էին և մըտ-
քերի մէջ թւում էին այն օգուտները,
որ կարող էին ստանալ իրանց պաշտօ-
նակցին արձակելուց յետոյ:

Իսկ Կուէի-ի ամենալաւ բարեկամն
էր. բայց գիտենալով թէ բանն ինչումն
է, չէր աշխատում շատ էլ պաշտպանել
նորան և նա միայն ձևի համար էլի մէկ
անգամ խօսեց իւր ընկերի օգտին: Իսկ
Թագաւորը խիստ կերպով գոռաց նորա
վերայ՝

— Ես ձեզ իմ առաջին նախարարս
եմ նշանակել նորա համար, որ դուք ա-
մեն բանի մէջ ինձ հնազանդ լինէք և
հակառակ չխօսէք:

Յետոյ նա դիմեց գլխաւոր դատա-
ւորին, այսինքն արդարադատութեան նա-
խարար Կաօ-Իաօ-ին:

— Դուք պէտք է բանտարկէք մե-
ղաւորին և դատի մատնէք: Գնացէք, կա-
տարեցէք ձեր գործը:

Կաօ-Իաօն վաղուց նախանձվում էր

Կուէի-ի վերայ և ուզում էր, որ նորա
պաշտօնը ստանայ իւր որդին: Նա դուրս
եկաւ դահլիճից կարծես յաղթութիւնը
տարած... Իսկ նորա յետևից քիչ-քիչ
սկսեցին ցրուել և միւսները: Ամենքն էլ
ուրախանում և ցնծում էին Կուէի-ի
կորստեան համար, նոր ծրագրներ կազ-
մելով իրանց մտքում: Միայն շատ քչե-
րը խորը կերպով ցաւում էին Կուէի-ի
դժբախտութեան վերայ և մտածում
էին, թէ ինչպէս բանան թագաւորի աչ-
քերը, ինչպէս հասկացնեն նորան ճշմար-
տութիւնը: Համարեա՞ արդէն ամենքը
դուրս էին եկել դահլիճից, երբ յանկարծ,
դատարանի նախագահը, ամենից յար-
գուած մանդարին Փանգ-ճին, մեծ ու
լուսնու նման սպիտակ մօրուքով ծերու-
նին չոքեց թագաւորի առաջ:

— Փրկէ նորան, տէր իմ, ասաց նա
ցածր ձայնով, եթէ ոչ իրան Կուէի-ի, գոնէ
նորա կնոջ և աղջկայ համար: Ես համո-
զուած եմ, որ նա բոլորովին մեղաւոր չէ:

Թագաւորն յուզուած, գետնից բարձ-
րացրեց չոքած ծերունուն և ձեռքով ցոյց
տուեց նորան դուռը, Փանգ-ճին լալով
գլուխ տուեց և հեռացաւ:

Երբ Շուն մենակ մնաց, բոլորովին
թուլացած և ընկճուած ընկաւ իւր թան-
գագին գահի վերայ և դառն կերպով
սկսեց արտասուել:

— Ա՛խ, Իու, տսաց նա ներս մըտ-
նող նախարարին. դու արդեօք գուշա-
կում էի՞ր, որ մենք այսքան չարութիւն
կըտեսնենք: Կուէի-ի հարիւր ընկերներից
միայն հինգը, կամ վեցն յանձն առան
ազնիւ կերպով նորան պաշտպանելու, իսկ
մինչև անգամ նորա ամենալաւ բարե-
կամներից երկուսը մեղադրեցին նորան:

— Այո՛, սա մի ծանր փորձութիւն
էր, իմ բարի թագաւոր: Բայց ինչ կայ
զարմանալու. մարդիկ մեծ մասամբ
միայն իրանց մասին են մտածում և բո-
լորն էլ ուզում են Կուէի-ի տեղն ստա-
նալ:

— Երդվում եմ սուրբ Լուի-ճէու-ի *)
անունով, որ նոքա դորա համար շատ
խիստ կըպատժուեն... Ես դոցա բոլորի
արդար դատաւորը կըլինեմ, որոնք մե-
ղադրեցին մի անմեղ մարդու, մինչև ան-
գամ առանց լսելու նորա հերքումները:
Բայց ես ուզում եմ դեռ սպասել և տես-
նել թէ սորա վերջն ի՞նչ է լինելու:

Շուտով ամբողջ քաղաքում տարա-
ճուեց, որ թագաւորը զայրացել է նախարար
Կուէի-ի վերայ: Իուրս եկաւ, որ Կուէին
շատ նախանձողներ և կեղծ բարեկամներ
ունէր, որոնք ուրախանում էին իրանց
մօտիկ ընկերի թշուառութեան վերայ,
իսկ Կուէի-ի ազնիւ և ճշմարտասէր ըն-

*) Լուի-ճէուն — չինական նշանաւոր
թագաւոր Խօանգ-տի-ի կինն էր, որն ասում
են գտել է շերամ պահելու միջոցը և ժո-
ղովրդին սովորեցրել է մետաքս մանել և մե-
տաքսէ կտորներ գործել: Նա յայտնի է շե-
րամի «բարի ոգի» անունով:

կերները, յարգելի ծերունի Փանգ-տի-ի առաջնորդու-թեամբ տարան նորան մինչև բանդը և ապա գնացին մխիթարելու նորա դժբախտ ընտանիքին: Երբ Կուէին բանտարկուեց, այն ժամանակ շատ շատերը սկսեցին մեղադրել, վատ խօսել նորա մասին և միևնոյն ժամանակ գովում էին թագաւորի արդարամտութիւնը: Իսկ միայն մի քանիսը տխուր և անհանգիստ էին մեղադրողի համար և ամեն հնար գործ էին դնում ու աշխատում էին բացատրել թագաւորին նորա անմեղութիւնը և երաշխաւոր էին Կուէի-ի համար, ինչպէս որ իրանց համար:

Շունի նախորդ Իաօ թագաւորի ժամանակուանից սովորութիւն կար, որ բոլոր Չինացիք թագաւորական պալատի դռների մօտ շինուած տախտակի վերայ, պէտք է գրէին իրանց կարծիքները տէրութեան մէջ պատահած նշանաւոր դէպքերի մասին: Այդ գեղեցիկ սովորութիւնը Շունը շարունակում էր պահպանել: Մի

քանի օրուայ մէջ այդ տախտակը լցուել էր զանազան թէ լաւ և թէ վատ կարծիքներով Կուէի-ի մասին: Մեծ դատաւորը հաւաքեց բոլոր այդ կարծիքները և մէկ առաւօտ վերջապէս Կուէի-ի դատը սկսուեց: Կուէի-ի կինը և նորա տասըն և չորս տարեկան սիրուն աղջիկը, Տա-կին չոքեցին թագաւորի առաջ:

— Խնայէ մեզ, ասաց վշտից բոլորովին հիւանդացած Տա-կի-ի մայրը և աղջիկն էլ դողդոջիւն ձայնով մօր լետեից կրկնեց՝ խնայէ հօրս:

Թագաւորը սաստիկ խղճաց այդ թշուառ զոհերի վերայ: Նա նայեց Իուին, կարծես հարցնում էր, թէ արդեօք ժամանակը չէ՞ ճշմարտութիւնն յայտնելու նոցա: Բայց այդ վայրկենին ներս մտաւ մեծ դատաւորը, նորա լետեից ամբողջ դատարանը և ապա բոլորից վերջը խեղճ Կուէին, որը հագիւ հազ քաշքշում էր իւր ծանր շղթաները: Կուէի-ի երեսը թէև տխուր էր, բայց ինքը հան

գիստ էր երևում. նա գիտէր, որ մեղա-
ւոր չէ և խիղճը չէր տանջում իրան:

— Տիկնայք, հեռու կանգնեցէք, խըս-
տու թեամբ ասաց թագաւորը: Քանի որ
Շունն է կառավարիչը պէտք է արդա-
րու թիւնը թագաւորէ ինչպէս աղքատ,
այնպէս էլ հարուստ և նշանաւոր մարդ-
կանց վերայ: Յետոյ նա դիմեց դատա-
րանին՝

— Յարգելի Կաօ-իաօ, և դուք, իմ
դատարանի ճշմարիտ ու արժանաւոր
ներկայացուցիչներ, եթէ դուք Կուէի-ին
մեղաւոր էք համարում, այն ժամանակ
նշանակեցէք նորան արժանի պատիժ:

— Թագաւորական գահը, որ շինուած
էր քարից ու փայտից հովանոցի տակ,
ընդարձակ հրապարակում, շըրջապա-
տուած էր մեծ բազմութեամբ: Թագաւորի
այդ խօսքերից յետոյ տիրեց խորին լռու-
թիւն: Յանկարծ այդ մեռելային լռու-
թեան ժամանակ լսուեց դատաւորի ձայնը՝

— Կայսրը պէտք է մեղաւոր Կուէի-ի

վզին անցնէ փայտէ օղակ*), զրկէ նորան
բոլոր քաղաքացիական իրաւունքներից
և աքսորէ այս երկրից: Կուէին համար-
ձակուել է յանդուգն կերպով խօսել թա-
գաւորի վերայ ժողովրդի առաջ: Նա մե-
ղաւոր է և արժանի է պատժի:

Յանկարծ մի սուր ճիչ լսուեց բազ-
մութեան միջից. այդ մեղադրուողի կինն
ու աղջիկն էին, որ ճչացին և ուշաթափ
վայր ընկան: Ժողովուրդն իրար անցաւ:
Կուէին գունաթափուեց բոլորովին և
շուտով ինքն իրան զսպելով, համարձակ
և հանգիստ կերպով բոլորին աչքի ան-
ցըրեց և յետոյ նորա հայեացքը մնաց
թագաւորի վերայ. նա սպասում էր թա-
գաւորի վերջին խօսքին:

Շունն բարձրացաւ գահից, յենուեց
Իու-ի վերայ և գոռաց ահռելի ձայնով

— Ոչ, Կուէին մեղաւոր չէ և նա չի՝
պատժուի: Ողորմելի՛ դատաւորներ, ահա՛

*) Չինաստանում աքսորեալների վզերը
կապում են փայտէ օղակ:

Թէ ինչպէս արդարութեամբ դուք դատում էք մարդկանց, առանց ապացոյցների, առանց փաստերի: Թագաւորի մէկ խօսքից դուք իրար անցաք և ուրախացաք, որ առիթ եղաւ յարձակուելու և կոխկռտելու անմեղին, որպէս զի դուք աւելի հանգիստ և աւելի ազատ կերպով կարողանաք ձեր անարդար և անզուսպ դատավճիռներն անել: Կորէք աչքիս առաջից և էլ երբէք չերևաք ինձ: Ահա իմ ողորմած պատիժը:

Յետոյ նա դիմեց իւր հաւատարիմ մանդարիններին՝

— Թագաւորը կարող է սխալուել, բայց այդ դէպքում նորա խորհրդատուները պէտք է օգնեն նորան հասկանալու իւր սխալը. նոքա պարտաւոր են այդպէս վարուել, մինչև անգամ եթէ վախենալու լինին, որ կը պատժուեն դորա համար: Եթէ որ թագաւորը սխալուի և նախարարները լուռ մնան, այն ժամանակ խեղճ, վիրաւորուած ժողովուրդն ո՞ւմ դիմէ:

Կուէի, ես ձեզ այս ծանր փորձութեան զոհ ընտրեցի միայն այն պատճառով, որ չափազանց շատ համոզուած էի ձեր անմեղութեան մէջ: Բայց ես պէտք է ձեզ հասցրած այդ չարիքն ուղղեմ: Եւ ահա իմ արքայական կարգադրութիւնս՝

Ձեր եղբայր Գուան տէուն և ձեր ամենամօտիկ մարդիկը կըստանան արձակուած Կաօ-Իաօ-ի, Լունգի և միւս կեղծ, խաբեբայ, ստոր դատաւորների պաշտօնները: Իմ հաւատարիմ Իու-ի տղան, Կին, կ'ամուսնանայ ձեր աղջկայ հետ: Իսկ ձեզ, Կուէի այսօրուանից կընշանակեմ իմ տէրութեանս առաջին նախարարը:

Բոլորը չոքեցին, իսկ ժողովրդի միջից ուրախութեան աղաղակներ լսուեցին: Թագաւորն ամենքին հրամայեց լռել և բռնելով Իու-ի ձեռքը, մօտեցրեց նորան զահին և շարունակեց՝

— Այսօր մեզ համար նշանաւոր օր է: Թագաւորը պատժեց մեղաւորներին և վարձատրում է տէրութեան հաւատա-

րիմ ծառայողներին: Ես արդէն ծեր և
 թոյլ եմ, այդ պատճառով չեմ կարող այլ
 ևս բարեխղճութեամբ աշխատել և գոր-
 ծել: Իսկ դու, Իու, թէև շատ ծառայու-
 թիւններ և օգնութիւններ ես հասցրել
 քա երկրին, բայց դեռ էլի շատ բան կա-
 րող ես անել նորա համար: Իու մեր եր-
 կիրը փրկեցիր հեղեղից, բայց չես պար-
 ծենում դորանով և շարունակում ես
 դարձեալ անդադար աշխատել և գործել:
 Ես ոչ ոքի չեմ ճանաչում, որը կարողա-
 նար համեմատուել քեզ հետ: Ես թէև
 հասարակ երկրագործի տղայ եմ, բայց
 Իսոն չարհամարհեց իմ ծագումս և ինձ
 իւր ժառանգը կարգեց: Իու ինձանից պա-
 կաս արժանի չես ժառանգելու այս գա-
 հը: Իու, խնդրում եմ քեզ չմերժես ին-
 ձանից յետոյ այս տէրութեան կառավա-
 րիչը լինել:

Հէնց նոյն իսկ այդ օրն, Իուին բոլոր
 ժողովուրդը Շուկի ժառանգ հրատարակեց:

Սի քանի տարի Իուն Շուն թագա

ւորի օրով այդ մեծ երկիրն երևելի կեր-
 պով կառավարեց. իսկ Շունի մահից յե-
 տոյ մենակ թագաւորում էր:

— Չինաստանում Իուին լիշում են
 դեռ մինչև օրս և սորա լիշատակն յար-
 գում են չինական ուրիշ մեծ և նշանա-
 ւոր թագաւորներից ոչ պակաս:



ՍԻՈՒ-ԼԻԷՆ, ՉԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆԻ
ԱՂՋԻԿԸ.

I.



ինաստանում հին օ-
րէնք կայ, որ ե-
թէ հաստատուի
թէ մէկ մարդ
խաբերայութիւն
է արել, նորա
ձեռքերը պէտք է կը-
տրրուին:

Մէկ չինացի մանդարինի (իշխան)
մեղադրեցին խաբերայութեան մէջ:

Բօգդիխանը — Չինաց թագաւորը
սաստիկ զայրացաւ մանդարինի վերայ և
հրամայեց նորան պատժել՝ ձեռքերը կըտ-
րել:

Արդէն ամեն բան պատրաստ էր
նորան պատժելու համար, երբ յանկարծ
Բօգդիխանի պալատը մտաւ դատապար-
տուած իշխանի դեռահաս աղջիկը — Սիու-
Լիէնը և սկսեց խնդրել պալատականնե-
րին, որ իրան թոյլ տան տեսնել Բօգդի-
խանին:

Հետ չէր նորա խնդիրը կատարել,
բայց աղջիկն այնպիսի ջերմ արտասուք-
ներով պալատականներին խնդրում և
աղաչում էր, որ նոցա գուժը վերջապէս
շարժուեց և նոքա վճռեցին ներկայացնել
աղջկան ահարկու Բօգդիխանին:

II.

Երբ Սիու-Լիէնը տեսաւ Բօգդիխա-
նին, որը ոտից մինչև գլուխ փայլում էր

ոսկով և աղամանդներով, նա ընկաւ նորա ոտքերը:

— Մեծ Բօգդիխան, ասաց նա՛ ասում են, որ իմ հայրս պատժի է արժանացել և նա իւր ձեռքերից պէտք է զրկուի: Ահա՛ ան իմ ձեռքերս:

Եւ բարձրացրեց ու տարածեց դէպի Բօգդիխանն իւր փոքրիկ և քնքոյշ ձեռքերը:

— Այս ձեռքերը, շարունակեց նա. պատկանում է իմ դժբաղդ հօրս: Այս ձեռքերը դեռ ընդունակ չեն կերակրելու հիւանդ մօրս, թոյլ եղբօրս և փոքրիկ քոյրիկիս: Ուրեմն ան այս ձեռքերը, հրամայէ օրէնքի խստութեամբ վարուել նոցա հետ, որպէս զի պահպանուին հօրս ձեռքերը, քանի որ նոքա կարող են կերակրել մեր ընտանիքին:

Թագաւորն ապշել էր այդ որդիական սիրուց, բայց կամենալով փորձել նորան, ասաց աղջկան, որը դեռ չոքած էր նորա առաջ:

— Վեր կաց, թող այդպէս լինի, ինչպէս որ դու խնդրում ես. թող քո անմեղ ձեռքերդ կտրուին, փոխանակ հօրդ մեղաւոր ձեռքերի:


Եւ Բօգդիխանը հրամայեց տանել աղջկան պատժի հրապարակն ու իւր ժամանակին բերել այնտեղ նորա հօրը:

III.

Պատժի հրապարակում Սիու-Լիէնին տարան հրապարակի մէջ տեղում շինուած սիւնի մօտ, որը ծածկուած էր արիւնի բծերով: Նորա ձեռքերը կապեցին սիւնի վերայ շինուած երկաթէ օղակներին և ահա՛ աղջկան մօտեցաւ դահիճը մերկացրած սուրը ձեռքին:

Սիու-Լիէնը մեռելի գոյն ստացաւ, բայց ոչ մի խօսք դուրս չեկաւ նորա բերանից — փրկութեան մասին:

Եւ սուրը բարձրացաւ նորա դեռ՝ երեսայական ձեռքերի վերայ... Այն ժամանակ տռաջ եկաւ թագաւորի գաճաճը, ձեռքով




նշան արեց դահճին և դահիճը ժպտալով սուրը վայր բերեց, դրեց պատեանի մէջ, աղջկայ մատին անգամ չըդիպելով:

Պատժի հրապարակի դռները բացուեցին և բանտարկուած հայրը պատժից բողբոջին ազատուած և երջանիկ ու շնորհակալ սրտով, գնաց ընկաւ աղջկայ գիրկը:

Բօգդիխանը ներեց մանդարինին և հրամայեց, որ էլ պատիժ չնշանակեն այն հրապարակում, որտեղ որ նա փորձեց այդ աղջկան: Այդ հրապարակի մէջ տեղում նա շինել տուեց մի քարէ սիւն և մարմարոնեայ տախտակի վերայ, որը հագցրած էր քարի մէջ, գրուած էր՝

«Այստեղ, Սիու-Լիէնը, մանդարին Իսուռնգի աղջիկը պատրաստ էր կեանքը զոհել իւր հօր ազատութեան համար: Օրհնուած են այն հայրերը, որոնք ունեն այդպիսի աղջկներ և օրհնուած է այն հողը, որի վերայ աճում է այդպիսի սէրը»:



Faint, illegible text, likely a table of contents or index, located on the right page.


Faint text at the bottom of the right page, possibly a page number or title.

ԲՈՒԿ 123
 13 11-4

2007

Նոյն թարգմանչինն է

	Ռ. Կ.
1 Յովհան Գուտտէնբերգ . . .	— 15
2 Գօկտօր Զէններ . . .	— 20
3 Մանկական Թատրօն . . .	1 —
4 Իբսէնի, Նօրա . . .	— 30
5 Լիր Արքայ . . .	— 5
6 Գայլ . . .	— 3
7 Թուղթ և Հին Գրքեր (Օստրո- գօրսկի) . . .	— 5
8 Տիրօլացի Աղջիկ և Ժլատ . . .	— 5
9 Մեր Պապի Գաւազանը . . .	— 5
10 Անհանգիստ Գիշեր . . .	— 5
11 Որսի գնդակ . . .	— 5
12 Մայրական սէր . . .	— 5
13 Մրցումն . . .	— 5
14 Գէորգ Կրարբ . . .	— 5
15 Չինական Առասպելներ . . .	— 15



ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԵԿ

ՀՀ Ազգային գրադարան



NL0376585

74.288

